

ՊԱՅԹՈՒՑԻԿ ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ

I. ՊԱՅԹՈՒՑԻԿ ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պայթուցիկ զինամթերքի վերացման (ՊԶՎ) գործողությունները ներառում են ՊԶ-ի հայտնաբերումը, նույնացումը, դաշտային գնահատումը, վնասագերծումը, վերականգնումը և վերացումը:

2. ՊԶՎ-ն կարող է իրականացվել որպես ականագերծման գործողությունների ընթացիկ մաս, որը հետևում է վտանգավոր տարածքներում կամ նրանց շուրջը պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) հայտնաբերմանը:

3. ՊԶՎ-ի գործողությունները պետք է նաև իրականացվեն վտանգավոր տարածքներից դուրս հայտնաբերված ՊՊՄ-ի վերացման համար: Նման միջոցառումները կարող են ներառել պատերազմի պայթուցիկ մնացորդի միայն մեկ միավոր, կամ մի շարք միավորներ՝ հայտնաբերված որոշակի տարածքի վրա, ինչպիսիք են ականանետի կամ հրետանային զենքի տեղակայման կետերը: Դրանք կարող են ներառել նաև զինամթերքի կուտակումները, բունկերներում կամ զինամթերքի պահպանման վայրերում մնացած լքված պայթուցիկ զինամթերքը:

4. Սույն չափորոշիչը չի ներառում հակահետևակային ականատումբերի կուտակումների վերացումը՝ համաձայն Հակահետևակային ականների արգելման համաձայնագրի:

5. Հակասականային գործողությունների ծրագրերի արդյունավետ կառավարումը, անհրաժեշտության դեպքում, ներառում է անվտանգ և արդյունավետ կերպով ՊԶՎ-ի

իրականացման հնարավորությունների ստեղծումը և պահպանումը: Սա ներառում է ՊՊՄ-ի ռիսկերի պաշտոնական գնահատումը և անվտանգ ու արդյունավետ ՊԶՎ-ի հնարավորությունների ստեղծումը: Նման հնարավորությունը պետք է ներառի չեզոքացման և վնասազերծման պատշաճ ընթացակարգերի նախապատրաստումը, լավ կրթված ու որակավորված ականազերծողների և ՊԶՎ-ի օպերատորների օգտագործումը, ինչպես նաև արդյունավետ ու ապահով սարքավորումների, պահեստավորման վայրերի և պարագաների կիրառումը:

6. Այն դեպքերում, երբ գոյություն ունի ՊԶՎ-ի ամբողջական հնարավորությունների սահմանափակ կարիք, ԱԳԱՄ-ն պետք է մշակի և տրամադրի ՊԶՎ-ի համապատասխան արձագանք:

7. Անվտանգ և արդյունավետ ՊԶՎ-ի հնարավորությունների զարգացումը կարող է պահանջել փորձագիտության մակարդակների սահմանումը՝ գործառնական պահանջների բազմազանության հետ գործ ունենալու նպատակով:

8. Որպես ընդհանուր սկզբունք՝ օպերատորները պետք է աշխատեն միայն այն իրերի և իրավիճակների հետ, որոնց վերաբերյալ իրենք կրթվել և ստացել են անհրաժեշտ լիազորություններ: Բոլոր մյուս դեպքերը պետք է ներկայացվեն փորձագիտության հաջորդ՝ առավել բարձր մակարդակին:

II. ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԵՎ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

9. Առանձին ականները կամ ՊՊՄ-ն պետք է վերացվեն կամ չեզոքացվեն հենց տեղերում այն ժամանակ, երբ անվտանգ չէ դրանց տեղափոխումը դեպի մոտակա վերացման կետ: Այդ ամենի հետ մեկտեղ, սա կօգնի նվազեցնել տարածքի աղտոտվածությունը մետաղական մասնիկներով, որոնք տարածվում են տեղում կատարված պայթյունների հետևանքով: Ականի կամ ՊՊՄ-ի, կամ դրանց որոշակի տեսակի տեղափոխման

կամ չտեղափոխման մասին որոշումը պետք է հիմնված լինի համապատասխան կրթված ՊԶՎ-ի օպերատորի կողմից իրականացված գնահատման վրա:

10. Եթե պայթուցիչի համակարգն այնպիսին է, որ դեպի մոտակա վերացման կետ տեղափոխություն կատարելն անվտանգ է, այն կարող է տեղափոխվել: Եթե պայթուցիչի համակարգը թույլ է տալիս երաշխավորել զինամթերքի անվտանգությունը չեզոքացման և (կամ) վնասազերծման միջոցով, այն պետք է վնասազերծվի՝ նախքան վերացման համար հարմար վայր տեղափոխվելը:

11. Համայնքի հետ հաղորդակցման գործառույթը, որն ապահովում է տեղի բնակչության իրազեկությունը կատարվող գործողությունների վերաբերյալ, պետք է լինի շարունակաբար կրկնվող գործողություն, որը համակցված է ՊԶՎ-ի գործողությունների հետ:

12. ՊԶՎ-ի ամբողջական կարողություններ ունեցող՝ ականազերծող կազմակերպությունները պետք է չեզոքացման և վնասազերծման ընթացակարգերի համար պատրաստեն Գործառնական ստանդարտ ընթացակարգեր (ԳՍԸ-ներ), որոնք կիրառելի են հայտնաբերման հավանականություն ունեցող ականների և ՊՊՄ-ի համար և համապատասխանում են միջազգայնորեն ընդունելի ՊԶՎ-ի պրակտիկաներին:

13. Եթե ականազերծող կազմակերպությունը չունի անհրաժեշտ ՊԶՎ-ի ամբողջական կարողություններ կամ հնարավորություն չունի որպես ենթակապալառուներ ձեռք բերելու այդ կարողություններն ունեցող անձանց կամ կազմակերպություններ, ապա այն պետք է նշի, նույնացնի և հաշվետվություն ներկայացնի հայտնաբերված ցանկացած ականի կամ պատերազմի պայթուցիկ մնացորդի վերաբերյալ: Այնուհետև ԱԳԱՄ-ն պատասխանատու կլինի համապատասխան ՊԶՎ-ի արձագանք տրամադրելու համար: Չեզոքացման և վնասազերծման ընթացակարգերը չպետք է անհրաժեշտ լինեն մեծաքանակ կամ առանձին լքված պայթուցիկ զինամթերքի համար, քանի որ, ըստ էության, նրանք չպետք է լինեն լիցքավորված կամ չպայթած:

III. ՎԵՐԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

14. Ականազերծող կազմակերպությունները պետք է ԳՍԸ-ներ պատրաստեն համապատասխան ականների և ՊՊՄ-ի արդյունավետ և անվտանգ վերացման համար: Սրանք պետք է ներառեն տեղերում ականների և ՊՊՄ-ի վերացումը, կամ ականների և ՊՊՄ-ի, ներառյալ ԼՊԶ-ն, մեկ առ մեկ վերականգնումը և վերացումը:

15. Մեծաքանակ ԼՊԶ-ի վերացումը պետք է առաջարկվի և իրականացվի համապատասխանորեն վերապատրաստված ՊԶՎ-ի օպերատորների կողմից: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել պայթյունի և մասնատման ազդեցությունների կանխարգելմանը, որոնք առաջ են գալիս ականի կամ ՊՊՄ-ի վերացման հետևանքով:

16. Մեծաքանակ վերացումների համար ընտրված տեղամասերը պետք է տեղակայված լինեն բնակելի տարածքներից բավականաչափ հեռու՝ որնիցե դիսկ չներկայացնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԿԱՆՆԵՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՂ ՇՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

I. ՉԱՓՈՐՈՇԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Սույն չափորոշչով կարգավորվում են ականներ հայտնաբերող շների (ԱՀՇ) օգտագործման հետ կապված հարցերը և սկզբունքները:

2. ԱՀՇ-ն համարվում են ականների և պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) հայտնաբերման հաճախակի օգտագործվող տեխնոլոգիա, քանի որ՝

1) ճշգրիտ իրականացման դեպքում ԱՀՇ-ի միջոցով հայտնաբերումը կարող է կատարվել առավել արագ և առավել ծախսարդյունավետ կերպով, քան ձեռքով կատարվող ականազերծումը, որի ժամանակ օգտագործվում են մետաղի հայտնաբերման սարքերը և հողահանման աշխատանքները.

2) ԱՀՇ-ն կարող են հայտնաբերել մետաղի ցածր պարունակությամբ և առանց մետաղի պարունակության ականներ և ՊՊՄ, ինչպես նաև աշխատել մետաղի բարձր պարունակություն ունեցող տարածքներում, օրինակ՝ երկաթուղային գծերի վրա գտնվող ականների ու ՊՊՄ-ի հայտնաբերման նպատակով.

3) ի տարբերություն գոլորշիների նկատմամբ զգայուն մի շարք միջոցների՝ շները կարող են օգտագործվել պայթուցիկ նյութերով արդեն իսկ աղտոտված հողատարածքում ականները և ՊՊՄ-ն հայտնաբերելու համար:

II. ԱՀՇ-Ի ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

3. ԱՀՇ-ն կարող են օգտագործվել բազմաթիվ տարբեր դերերում, սակայն նրանք լավագույնս աշխատում են այնպիսի տարածքներում, որտեղ ականների և (կամ) ՊՊՄ-ի կուտակումը ցածր է: Որպես այդպիսին՝ նրանք առավել արդյունավետ օգտագործվում են այնպիսի գործողությունների համար, ինչպիսիք են՝

- 1) ականների և ՊՊՄ-ի առկայության հաստատումը.
- 2) հետազոտվող հողատարածքի նվազեցումը և ականապատ դաշտի սահմանագծումը.
- 3) մուտքի ճանապարհների և ճանապարհների եզրերի փնտրումը.

4) մաքրման հաստատումը, ներառյալ վնասազերծված տարածքի նմուշների արագ փորձարկումը (որակի վերահսկում (ՌՎ), որը կարող է իրականացվել՝ ինչպես ձեռքով, այնպես էլ՝ մեխանիկական վնասազերծումից հետո.

5) մեխանիկական ականազերծման սարքավորումների համար անհասանելի հողակտորների ստուգումը.

6) երկաթուղիների և մետաղով բավականաչափ աղտոտված տարածքների հետազոտումը.

7) մաքրման մեկնարկի կետերի համար անվտանգ ուղիների ստեղծումը:

4. ԱՀՇ-ն կարող են առավել արդյունավետ օգտագործվել ականների և ՊՊՄ-ի հաստատման ու տարածքի փոքրացման համար:

5. ԱՀՇ-ն հարմար են նախնական հետազոտության ընթացքում կոնկրետ տեղամասում ականների և ՊՊՄ-ի բացակայությունը սահմանելու համար՝ հնարավորություն տալով կասկածելի վտանգավոր տարածքները բացառել շատ ավելի արագ, քան ձեռքով իրականացվող ականազերծման դեպքում:

6. ԱՀՇ-ն կարող են արագ աշխատել ականների և ՊՊՄ-ի ցածր կուտակում ունեցող տարածքներում, և այդ իսկ պատճառով բավականին հարմար են սահմանագծերի որոշման համար:

7. Ականազերծող թիմերը կարող են այնուհետև աշխատել այն փոքրացված տարածքների վրա, որոնց վրա հայտնի է ականների (ՊՊՄ-ի) առկայությունը:

8. ԱՀՇ-ն առավել հարմար և ծախսարդյունավետ են ճանապարհների վնասազերծման համար, քան ձեռքով ականների (ՊՊՄ-ի) վնասազերծումը, և առավել անվտանգ են շրջակա միջավայրի համար, քան մեխանիկական վնասազերծումը:

III. ԱՀՇ-Ի ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

9. ԱՀՇ-ն չեն կարող արդյունավետորեն օգտագործվել բոլոր իրավիճակներում: Խիտ և ծակող բուսականությամբ տարածքներում ԱՀՇ-ի կողմից փնտրման աշխատանքները կարող են սահմանափակվել՝ հանգեցնելով չհետազոտված տարածքների առկայությանը:

10. Բուսականությունը կարող է շների հետ աշխատողներին թույլ չտալ վերահսկել հետազոտությունը և հետևել ԱՀՇ-ի ազդանշաններին. չնայած հետազոտման որոշակի եղանակներ կարող են նվազեցնել այդ խնդիրը:

11. Տեղին չէ օգտագործել ԱՀՇ-ին ականների բարձր խտություն ունեցող տարածքներում, քանի որ ազդանշանների թիվը կարող է անարդյունավետ դարձնել այդ գործողությունները, և այս դեպքերում պետք է դիտարկվեն նաև անվտանգության միջոցները:

12. Որոշակի պայմաններում ԱՀՇ-ի գործողությունները կարող են նաև կիրառելի չլինել ականների բարձր խտություն ունեցող այն տարածքներում, որոնք մաքրվել են մեխանիկորեն:

13. Թաց կամ ցուրտ պայմանները սահմանափակում են ԱՀՇ-ի կողմից ճանաչվող հոտի տարածումը: Որոշ տեղամասերում անձրևը կարող է լայնորեն տարածել նպատակային հոտերը՝ ԱՀՇ-ի համար բարդացնելով ականների հայտնաբերումը, ինչպես

նաև շարունակական ուժեղ քամին կարող է խոչընդոտել ԱՀՇ-ի գործողությունները՝ տարածելով հոտը:

14. Աշխատանքային պայմանների անսպասելի փոփոխության դեպքում կարող է անհրաժեշտ լինել իրականացնել որոշակի վերավարժեցման աշխատանքներ՝ կամ անսովոր եղանակային պայմանների պատճառով, կամ էլ այլ աշխարհագրական տեղամասեր ԱՀՇ-ի տեղափոխման հետևանքով:

15. Առանձին ԱՀՇ-ի նկատմամբ վստահությունը կարող է տարբեր լինել, չնայած տեղին չէ անմիջապես մեղադրել ԱՀՇ-ի խնդիրների առաջացման դեպքում: Դրանց պատճառը կարող է լինել գործառնական համակարգի ճախողումը, անարդյունավետ կառավարումը, վարժեցման սխալները, հիվանդությունը կամ հոգնածությունը, կամ էլ՝ նպատակային հոտի վրա ազդեցություն ունեցող միջավայրային հետևանքները:

16. ԱՀՇ-ի վստահելիությունը կարող է բարելավվել՝ նույն տարածքի վրա օգտագործելով երկու կամ ավելի ԱՀՇ: Դեպքերի մեծ մասի համար առաջարկվում է օգտագործել առնվազն երկու ԱՀՇ:

17. Երբ շներն աշխատում են չափազանց աղտոտված տարածքներում, օրինակ, ականների, ՊՊՄ-ի կամ ցրված պայթուցիկ նյութերի հետևանքով աղտոտված վայրերում, ստուգումներ պետք է իրականացվեն երաշխավորելու համար այն, որ այս աղտոտումները չեն խոչընդոտում նպատակային ազդանշաններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱԿԱՆՆԵՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՂ ՇՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

I. ԱԿԱՆՆԵՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՂ ՇՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ

1. Ականազերծող կազմակերպությունները պետք է գրանցումներ կատարեն յուրաքանչյուր շան համար՝ առողջության, վարժեցման և ականներ հայտնաբերող շների (ԱՀՇ) աշխատանքի վերաբերյալ կարևոր տվյալները գրանցելու նպատակով: Այս գրանցումներն ականազերծման կազմակերպությանը և արտաքին վերահսկող թիմերին շարունակական գրավոր տեղեկատվություն են տրամադրում ԱՀՇ-ի առողջության, վարժեցման և աշխատանքային փորձի մասին:

2. Պետք է ներառված լինի հետևյալ տեղեկատվությունը՝

1) ԱՀՇ-ի վերաբերյալ ընդհանուր տվյալներ, ինչպիսիք են՝ տեսակը, սեռը, ծագումնաբանությունը, տարիքը (ծննդյան ամսաթիվը) և վերարտադրման պատմությունը.

2) բժշկական տվյալները, որոնք պետք է ներառեն ԱՀՇ-ի բժշկական հիմնական վիճակագրությունը, չափերը, կշիռը և այլն, ցանկացած հիվանդությունների գրանցումները, վնասվածքները և տրամադրված բուժումը, սննդակարգի պահանջները և առողջական վիճակի ընթացիկ ստուգումների և պատվաստումների վերաբերյալ գրանցումները.

3) վարժեցման գրանցումները՝ ներառելու համար կատարված վարժեցումների ամսաթվերը, տևողությունը և տեսակը՝ ներառյալ կատարելագործման բարձրացման վարժեցումները: Մանրամասները պետք է ներառեն վարժեցնողներին (շների հետ աշխատողներին), շրջակա միջավայրի պայմանները (եղանակը, մթնոլորտը և տեղամասը), գործառնական ընթացակարգերը, նպատակային առարկաները և դրանց տեղակայման

մասին տվյալները, վարժեցումների արդյունքները և վարժեցման ընթացքում ԱՀՇ-ի գործունեության վերլուծությունը.

4) գործառնական փորձարկման գրանցումները:

3. Եթե գրանցամատյանում գրանցումներ է կատարում ԱՀՇ-ի հետ աշխատող անձից բացի մեկ այլ անձ, ԱՀՇ-ի հետ աշխատող անձը պետք է յուրաքանչյուր գրանցումից հետո ստորագրի գրանցամատյանը՝ հաստատելու համար գրանցումը և ճանաչելու համար կատարված նշումները:

4. ԱՀՇ-ի գրանցամատյանները պետք է պահպանվեն այն տեղամասերում, որտեղ աշխատում են ԱՀՇ-ն և, անհրաժեշտության դեպքում, պետք է ներկայացվեն վերահսկող թիմերին:

II. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

5. ԱՀՇ-ի՝ պատշաճ գործունեություն իրականացնելու կարողությունը կարող է կախված լինել նրա առողջությունից և բարեկեցությունից, ինչը նշանակում է, որ ԱՀՇ-ի՝ առարկաների հայտնաբերման վստահելիությունը կարող է տարբեր լինել յուրաքանչյուր օր: Հետևաբար, ականագերծող կազմակերպությանն անհրաժեշտ է յուրաքանչյուր օր գնահատել իրենց ԱՀՇ-ին՝ ցանկացած աշխատանքներ իրականացնելուց առաջ և ընթացքում:

6. Գնահատումը պետք է բաղկացած լինի առողջության ստուգումից և կարողությունների փորձարկումից՝ ԱՀՇ-ի զննման հնարավորություններում վստահություն առաջացնելու նպատակով: Կարողությունների փորձարկումն ԱՀՇ-ի համար նաև «աշխուժացման վարժություն» է:

7. Բոլոր ԱՀՇ-ն պետք է յուրաքանչյուր օր անցնեն առողջության ստուգում, նախքան իրենց կթույլատրվի սկսել աշխատանքը, իսկ աշխատանքային օրվա ընթացքում պետք է իրականացվեն հետագա ստուգումները:

8. Եթե ստուգումների արդյունքում պարզվում է, որ շունը հիվանդ է կամ անաշխատունակ այնքանով, որ դա կարող է ազդել նրա աշխատանքային որակի վրա, շունը չպետք է օգտագործվի՝ մինչև լիարժեք ապաքինումը:

9. Յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտից հետո անհրաժեշտ են նաև առողջության հետագա ստուգումներ:

10. Կառավարիչները պետք է գնահատեն ԱՀՇ-ի աշխատանքային կարողությունները՝ խորհրդակցելով ԱՀՇ-ի հետ աշխատողների և անասնաբույժների (կամ ԱՀՇ-ի բժիշկների) հետ՝ նախքան ԱՀՇ-ի աշխատանքի թույլտվության տրամադրումը:

11. Եթե որոշում է կայացվում օգտագործել առողջական չնչին խնդիրներ ունեցող ԱՀՇ, աշխատանքների ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձվի ԱՀՇ-ի գործունեության և ինքնազգացողության վրա:

III. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ

12. Յուրաքանչյուր օր՝ աշխատանքն սկսելուց առաջ, բոլոր ԱՀՇ-ն պետք է անցնեն կարողությունների փորձարկում: Կարողությունների փորձարկման նպատակն է սահմանել, թե արդյոք ԱՀՇ-ն ունակ են ճանաչել նպատակային հոտը, և արդյոք համապատասխանաբար շփվող, մոտիվացված և աշխատանքի վրա կենտրոնացված են: Յուրաքանչյուր շան համար փորձարկման իրականացման անհրաժեշտ օրվանից մի քանի օր առաջ պետք է պատրաստվի փորձարկումների դաշտ, որը գտնվում է աշխատավայրի ապահով տարածքում: Դաշտի սահմանները պետք է նշված լինեն: Հողի մեջ պետք է տեղակայված լինեն այնպիսի ականներ կամ ՊՊՄ (կամ նրանց մասերը), որոնք կարող են հայտնաբերվել ականազերծման գործողությունների ընթացքում: Փոքր առարկաները կարող են տեղադրվել հողի մակերեսին շատ մոտ՝ ունելիների կամ բոնիչների միջոցով: Փորձարկման դաշտի ներսում գտնվող լրացուցիչ կետերը պետք է ցույց տան նաև հողի մակերեսի վնասվածքները և պարունակեն դատարկ անցքեր ու ոչ ականային թիրախներ:

Աշխատանքն սկսելուց առաջ յուրաքանչյուր շուն զննման աշխատանքներ կիրականացնի առանձին փորձարկման դաշտում, իսկ ԱՀՇ-ի հետ աշխատող անձը կգնահատի ԱՀՇ-ի ենթարկումը, մոտիվացիան, կենտրոնացումը և նպատակային առարկաների հայտնաբերման կարողությունը: Երբ շունը ցույց է տալիս պատշաճ զննման կարողություններ և վարքագիծ և կարող է տարբերել նպատակային առարկաներն ու այլ թիրախները, շունը կարող է համարվել պատրաստ՝ այդ օրն աշխատանք իրականացնելու համար:

13. Նույն փորձարկման դաշտը կարող է օգտագործվել մի քանի օրվա ընթացքում, սակայն առաջարկվում է, որ յուրաքանչյուր երկու կամ երեք օրը մեկ նախապատրաստվեն նոր փորձարկման դաշտեր:

14. Նույն փորձարկման դաշտն օգտագործելու դեպքում զննման ուղղությունը պետք է փոխվի յուրաքանչյուր օր: Եթե փորձարկման դաշտը կամ ուղին պետք է կիրառվի մի քանի անգամ, կարևոր է, որ փորձարկման յուրաքանչյուր առարկա մնա հողի մեջ՝ այն վայրում, որտեղ այն ի սկզբանե տեղադրվել էր:

15. Եթե փորձարկման առարկաները տեղափոխվեն, շունը դեռ կարող է հայտնաբերել նրա նախկին տեղը՝ հողի աղտոտման հետևանքով, հետևաբար, եթե փորձարկման առարկան պետք է տեղափոխվի, նոր տեղամասեր պետք է ստեղծվեն այլ վայրերում, սակայն նույն ընդհանուր տարածքի վրա:

IV. ԱՀՇ-Ի ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

16. ԱՀՇ-ի գործողությունները պլանավորելիս՝ գոյություն ունեն մի շարք բաղադրիչներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել՝

1) հնարավոր վտանգները: Անհրաժեշտ է իրականացնել վտանգների գնահատումը՝ երաշխավորելու համար, որ ԱՀՇ-ն վարժեցվել և փորձարկվել են զննվող նպատակների կամ ցանկացած այլ վտանգների ուղղությամբ, որոնք կարող են առկա լինել (օրինակ՝

թաքնված պարանները): Եթե կարող են առկա լինել այնպիսի վտանգներ, որոնց ուղղությամբ ԱՀԸ-ն չեն վարժեցվել կամ փորձարկվել, ապա շունը չպետք է աշխատի այդ տարածքում կամ մինչև այդ վտանգների հեռացումը, կամ էլ ԱՀԸ-ի վարժեցումն այդ վտանգներին համապատասխանաբար արձագանքելու ուղղությամբ և այդ արձագանքի պատշաճ փորձարկումը.

- 2) առաջադրանքի իրականացման համար առկա ԱՀԸ-ի թիվը.
- 3) օգտագործման ենթակա զննման ընթացակարգերը.
- 4) շրջակա միջավայրի պայմանները.
- 5) առաջադրանքի կառավարման պահանջները:

V. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԱՀԸ-Ի ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

17. ԱՀԸ-ի գործողությունների համար նախապատրաստումը ներառում է հետևյալ քայլերը՝

1) ապահովել ԱՀԸ-ի համար անհրաժեշտ վարժեցման բոլոր պահանջների (ներառյալ ԱՀԸ-ի կազմակերպությունների հավաստագրումը) իրականացումը և ԱՀԸ-ի՝ աշխատանքի համար պատրաստ լինելը.

2) եթե ականազեղծման առաջադրանքը պետք է պահանջի ավելի քան հինգ օր, վարժեցման հարմար տարածքներում ապահովել ժամանակավոր դաշտերի պատրաստումը՝ տեղերում իրականացվող դասընթացների համար.

3) սահմանել ԱՀԸ-ի աշխատանքի տեղամասը, որի ուրվագիծը պետք է սահմանված լինի սույն չափորոշչում նշված հատկորոշումներին և ուղեցույցներին համապատասխան.

4) ապահովել գործողությունների համար անհրաժեշտ կազմակերպչական և վարչական, ինչպես նաև՝ անձնակազմի և ԱՀԸ-ի համար բժշկական աջակցությունը:

VI. ԱՀՇ-Ի ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

18. ԱՀՇ-ի աշխատավայրի ստեղծման ընթացքում անհրաժեշտ է ապահովել՝

1) տեղում իրականացվող պահպանման վարժեցման տարածքի սահմանումը.

2) ԱՀՇ-ի թիմերի միջև անվտանգության նվազագույն տարածության պահպանման հնարավորությունը.

3) առաջադրանքի ընթացքում օգտագործման ենթակա ԱՀՇ-ի թվի համար համապատասխան զննման տարածքների առկայությունը.

4) առաջադրանքի կառավարման և վերահսկման ցանկացած պահանջի ապահովման հնարավորությունը.

5) այնպիսի գործոնների դիտարկումը, ինչպիսիք են՝ քամու ուղղության հնարավոր փոփոխությունները, հողի խոնավությունը, բուսականությունը և բարձր խոնավություն ունեցող տարածքները, որոնք կարող են խոչընդոտել արդյունավետ զննմանը:

VII. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՒՂԻՆԵՐԸ

19. Անվտանգության անցուղիները, որոնց վրա հաստատված է վտանգների բացակայությունը, օգտագործվում են դեպի ականազերծման աշխատանքային տեղամաս և նրա շուրջն անցանելիության ապահովումը:

20. Անվտանգության անցուղիները պետք է ունենան առնվազն 2.0 մ լայնություն՝ ապահովելու համար ԱՀՇ-ի և նրանց հետ աշխատողների անվտանգ անցումը և, անհետաձգելի իրավիճակների դեպքում, հնարավորություն տան իրականացնելու տարահանումը՝ պատգարակի օգնությամբ:

VIII. ԶՆՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

21. ԱՀՇ-ի օգտագործման առավել տարածված մեթոդն է՝ տեղամասի բաժանումը զննման դաշտերի կամ հատվածների՝ որոնց միջև գտնվում են անվտանգության

անցուղիները: Այս համակարգի օգտագործման դեպքում պետք է կիրառվեն հետևյալ կանոնները՝

1) զննման տարածքների շուրջ պետք է ստեղծվեն հստակորեն նշագծված անվտանգության անցուղիները: Դրանք կարող են վնասագերծված լինել ձեռքով կամ ԱՀՇ-ի օգնությամբ, որին կհետևի ձեռքով կատարվող հետագա ստուգումը.

2) զննման յուրաքանչյուր դաշտի կամ հատվածի անկյունները պետք է հստակորեն նշված լինեն այնպես, որ բոլոր կողմերից տեսանելի լինեն ԱՀՇ-ի հետ աշխատող անձի համար.

3) երբ զննման գոտիների կամ ԱՀՇ-ի այլ աշխատանքային տարածքների նշման համար կիրառվում են ներկված նշաններ, նրանք պետք է ներկված լինեն աշխատանքներն սկսելուց առնվազն մեկ շաբաթ առաջ՝ ապահովելու համար ներկի լիարժեք չորացումը.

4) դաշտի կամ հատվածի ներսում գտնվող ամբողջ տարածքը պետք է տեսանելի լինի ԱՀՇ-ի հետ աշխատողի համար: Եթե բուսականությունն այնպիսին է, որ ԱՀՇ-ի հետ աշխատողը չի կարողանում զննման ընթացքում մշտապես հետևել ԱՀՇ-ին, ապա բուսականությունը պետք է հեռացվի կամ դաշտը, կամ հատվածը պետք է բաժանվի ավելի փոքր հատվածների:

22. ԱՀՇ-ի գործողությունների համար օգտագործվող առավել տարածված զննման երկու եղանակներն են՝

1) զննման ուղիների համակարգը: ԱՀՇ-ն զննման աշխատանքներ են իրականացնում զննման դաշտում կամ հատվածում գտնվող մի շարք ուղիղ գուգահեռ ուղիներում, որոնց լայնությունը կազմում է 0.3 մ-0.5 մ: Այս ուղիները սովորաբար ունենում են 10 մ երկարություն: Ուղիներ կարող են գտնվել զննման դաշտի կամ հատվածի ցանկացած կողմում (կախված քամու ուղղությունից).

2) կարճ վզափոկով համակարգ: ԱՀՇ-ի գննման աշխատանքներ են իրականացնում գննման դաշտում կամ հատվածում գտնվող մի շարք ուղիղ զուգահեռ ուղիներում, որոնց լայնությունը կազմում է 0.3 մ-0.5 մ:

23. Ուղիներ կարող են գտնվել գննման դաշտի կամ հատվածի ցանկացած կողմում (կախված քանու ուղղությունից):

24. ԱՀՇ-ի հետ աշխատող անձը կքայլի շան կողքով կամ նրա հետևից՝ այն ուղիով, որը նախապես մաքրվել է իր սեփական շան կողմից:

25. Բարձր ռիսկայնություն ունեցող տարածքներում այն պետք է գննված լինի երկու ԱՀՇ-ի կողմից՝ նախքան նրանց հետ աշխատող անձը կկարողանա քայլել այդ տարածքով:

26. Սովորաբար տարածքը ԱՀՇ-ի կողմից կարող է գննվել երկար վզափոկի սկզբունքով՝ նախքան կարճ վզափոկով համակարգի կիրառումը: Նշված երկու գննման եղանակներն էլ ունեն ինչպես առավելություններ, այնպես էլ՝ թերություններ, և որոշ ծրագրեր նախընտրում են տարածքը գննել՝ առաջին անգամ կիրառելով երկար վզափոկի համակարգը, իսկ երկրորդ անգամ՝ կարճ վզափոկի համակարգը:

27. Համեմատական առավելություններն են. երկար վզափոկի համակարգը կարող է իրականացվել ավելի արագ, մասնավորապես, այն դեպքում, երբ ԱՀՇ-ի հետ աշխատողը կարողանում է լիարժեքորեն վերահսկել ամբողջ գննման տարածքը:

28. Կարճ վզափոկի համակարգը ԱՀՇ-ի հետ աշխատողին թույլ է տալիս առավել հեշտությամբ վերահսկել շան գործունեությունը՝ ապահովելու համար մինչև ուղղու վերջը լիարժեք գննման իրականացումը, և աշխատել սահմանափակ տեսանելիությամբ բարդ տարածքներում:

29. Զննման ժամանակահատվածի տևողությունը պետք է սահմանվի միայն ԱՀՇ-ի հետ աշխատող անձի կողմից՝ ելնելով ԱՀՇ-ի կարողություններից և ԱՀՇ-ի աշխատանքային պայմաններից:

IX. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՀՇ-Ի ԹԻՎԸ

30. Եթե ԱՀՇ-ն օգտագործվում են որպես հայտնաբերման առաջնային գործիք, ապա բոլոր տարածքները պետք է գնվեն առնվազն երկու տարբեր ԱՀՇ-ի կողմից՝ նախքան վնասագերծված համարվելը: Որպես բացառություն՝ մեկ հատուկ վարժեցված շուն կարող է օգտագործվել առանձին՝ անհետաձգելի բժշկական տարահանման դեպքում:

31. Տեխնիկական հետազոտության ընթացքում օգտագործման դեպքում մեկ շան միջոցով իրականացվող գնումը կարող է բավարար լինել ականների բացակայությունը երաշխավորելու համար, սակայն ականների հայտնաբերման դեպքում պետք է օգտագործվեն երկու ԱՀՇ:

32. Ձեռքով իրականացվող կամ մեխանիկական գործողություններից հետո երկրորդային վնասագերծում կամ հաստատում ապահովելու կամ վստահություն ներշնչելու համար ԱՀՇ-ի գործողությունների իրականացման ժամանակ կարող է օգտագործվել մեկ շուն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱԳԱՄ-ի կողմից հատկորոշված վնասագերծման պահանջները պետք է ապահովված լինեն: Այս պարագայում ևս ականներ հայտնաբերելու դեպքում պետք է իրականացվի երկու ԱՀՇ-ով գնում:

X. ԹԻՐԱՄԵԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ

33. ԱՀՇ-ն պետք է վարժեցված լինեն թիրախները ցույց տալու համար՝ ինչպես ներկայացված է ականագերծող կազմակերպության ԳՍԸ-ում, օրինակ՝ նստելով կամ պատկերով թիրախի կողքին:

34. Թիրախը ցույց տալու ժամանակ շունը չպետք է ֆիզիկապես դիպչի ցույց տրվող կետին: Եթե շունը նստում կամ պատկում է ցուցադրվող թիրախի վրա կամ աշխատանքի, վարժեցման կամ փորձարկման ընթացքում քերում է հողը, նրան պետք է դուրս բերվի գործառնական ծառայություններից և վերավարժեցվի՝ մինչև այդ թերության վերացումը:

35. ԱՀԸ-ի կողմից ցույց տրվող կետի գտնվելու վայրը պետք է հստակորեն և ճշտորեն նշված լինի: Նշելու ընթացքում ոչ մի անձ չպետք է ֆիզիկապես մուտք գործի չվնասագերծված տարածք՝ մինչև այն գտնված չլինի երկու ԱՀԸ-ի կողմից:

36. Անհրաժեշտ է հնարավորինս խուսափել աշխատանքների ընթացքում ԱՀԸ-ի պարզևատրումից, քանի որ այդ դեպքում հնարավոր չէ դատել, թե արդյոք ցույց տրված կետն իրոք թիրախ է, թե՛ ոչ:

37. Եթե աշխատանքի ընթացքում շունը պարզևատրվում է, ապա պարզևատրման ընթացքում չպետք է մուտք գործի որևիցե վտանգավոր կամ չհետազոտված տարածք:

38. Եթե բարդ է շանը դեկավարել պարզևատրման ընթացքում, նրան պետք է դուրս բերվի գործառնական ծառայություններից և վերավարժեցվի՝ մինչև այդ թերության վերացումը:

39. ԱՀԸ-ի կողմից ցույց տրված կետերի հետազոտման ընթացքում հետազոտման ենթակա նվազագույն տարածքը պետք է լինի ցուցադրված կետի շուրջն առնվազն 1 մ շառավղով տարածք: Այն պետք է ընդլայնվի կամ տեղափոխվի՝ կախված քանու ուղղությունից և այլ փոփոխականներից, որոնցից տեղյակ է ԱՀԸ-ի հետ աշխատող անձը:

XI. ԱՀԸ-Ի ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

40. Քամի: Լավ վարժեցված շունը՝ պետք է կարողանա սահմանել թիրախի ճշգրիտ տեղը՝ հանդիպակաց կամ կողային քանու դեպքում:

41. Պետք է կիրառվեն հետևյալ կանոնները՝

1) շունը չպետք է օգտագործվի, եթե քանու արագությունը (հողի մակարդակի վրա) 18 մ/վ-ից ավելի արագ է.

2) շունը չպետք է օգտագործվի, եթե քանու արագությունը 7 մ/վ-ից ավելի արագ է, իսկ հողի մակերեսը չափազանց չոր է. նրանից փոշի է բարձրանում.

3) շունը չպետք է զննման աշխատանքներ կատարի, եթե համընթաց քանու արագությունը 2 մ/վ-ից ավելի բարձր է:

42. Անձրև: Թույլ անձրևը նվազագույն ազդեցությունն է ունենում հողում թիրախային հոտերի առկայության վրա, իսկ անձրևին հետևող գոլորշիացումը կարող է կարճ ժամանակով ավելացնել հոտը՝ օժանդակելով թիրախային առարկաների հայտնաբերմանը:

43. Ուժեղ անձրևը նպատակային հոտն ավելի է խորասուզում հողի մեջ կամ այն տարածում է առավել մեծ տարածքով՝ բարդացնելով ԱՀՇ-ի աշխատանքը:

44. Ուժեղ անձրևից հետո ականագերծող կազմակերպություններին հարկավոր է ԱՀՇ-ին փորձարկել հողի նմանատիպ պայմաններ ունեցող փորձարկման տեղամասերում, որոնք ևս ենթարկվել են նույն ուժեղ անձրևին՝ ապահովելու համար, որ ԱՀՇ-ն դեռևս կարողանում են բավարար կերպով հայտնաբերել նպատակային առարկաները:

45. Եթե ԱՀՇ-ն չեն կարողանում վստահելի կերպով հայտնաբերել նպատակային առարկաները, ապա ԱՀՇ-ի գործողությունները չպետք է իրականացվեն:

46. Ձյուն: Շունը չպետք է օգտագործվի, երբ հողի մակերեսը ծածկված է ձյան շերտով:

47. Խոնավություն: Ապահովելու համար բավականին խոնավ պայմաններում ԱՀՇ-ի կողմից աշխատանքներն իրականացնելու կարողությունը, ԱՀՇ-ն պետք է վարժեցվեն և փորձարկվեն այդ պայմանների ներքո: Պայմանների կտրուկ փոփոխության դեպքում անմիջապես պետք է իրականացվեն լրացուցիչ վարժեցում և կրթում ապահովելու համար այն, որ շունը կարող է աշխատել նոր պայմաններում:

48. Մթնոլորտի աղտոտում: Մթնոլորտի աղտոտումը կարող է խոչընդոտել ԱՀՇ-ի արդյունավետ աշխատանքին, հետևաբար, ԱՀՇ-ն չպետք է օգտագործվեն այն տարածքներում, որտեղ մթնոլորտն ակնհայտորեն աղտոտված է գազերով, ծխով կամ նավթամթերքի, պարարտանյութերի, քիմիական նյութերի, աղբի, տեղական այրումների

(ներառյալ բուսականության) հոտերով և տրանսպորտային միջոցների կամ գործարանների արտանետած գազերով:

49. Բուսականություն: Շունը չպետք է օգտագործվի այն տարածքներում, որտեղ բուսականությունը խոչընդոտում է զննման աշխատանքներին, կամ եթե բուսականությունը թույլ չի տալիս շան հետ աշխատող անձին տեսնել և վերահսկել զննումը:

50. Բուսականությունը պետք է հեռացվի կտրելու կամ այրելու միջոցով: Բուսականության կտրումը կարող է խափանել թիրախային առարկայից վեր հոտի շերտը և ազդեցություն ունենալ հոտի սյան վրա:

51. Այն դեպքերում, երբ պահանջվում է բուսականության կտրում, անկախ նրանից, թե ինչպես պետք է իրականացվի կտրումը, ԱՀՇ-ի ցանկացած գործողություններ կատարելուց առաջ անհրաժեշտ է իրականացնել վարժեցում և փորձարկում սահմանելու համար՝

1) անվտանգ ժամանակի տևողությունը՝ կտրման և ԱՀՇ-ի զննումների միջև.

2) բուսականության կտրումից հետո ԱՀՇ-ի կողմից թիրախային առարկաների ցուցադրման ճշտությունը:

52. Բուսականության այրումը կարող է բացասական ազդեցություն ունենալ ԱՀՇ-ի զննման կարողությունների վրա: ԱՀՇ-ն չպետք է օգտագործվեն այրված բուսականությամբ տարածքներում բացառությամբ այն դեպքերի, երբ երաշխավորվում է նրանց կողմից այրված տարածքներում հայտնաբերումներ կատարելու կարողությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱԿԱՆՆԵՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՂ ՇՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԱՇԽԱՏՈՂ
ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

I. ԱՀՇ-Ի ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. Գործառնական փորձարկման նպատակն է վստահություն ներշնչել առանձին շան և նրա հետ աշխատող անձի՝ սխալ ցուցմունքների նվազագույն մակարդակով նպատակա-
յին առարկաների հայտնաբերման ունակության մեջ: Նպատակն է առանձին փորձարկել
բոլոր ականներ հայտնաբերող շները (ԱՀՇ) և նրանց հետ աշխատող անձանց:

2. Չնայած որոշ իրավիճակներում կարող է ցանկալի լինել իրականացնել թիմերի
գործառնական փորձարկում, անհրաժեշտ է իրականացնել առավել բազմակողմանի
փորձարկում, որը ներառված չէ սույն չափորոշչում:

3. Փորձարկումը չի դիտարկում ԱՀՇ-ի կարողությունները՝ որպես լիարժեք վնասա-
զերծման համակարգ: ԱՀՇ-ն հանդիսանում են ականազերծման գործիքներից մեկը և պետք է
ինտեգրվեն վնասազերծման անհրաժեշտ չափորոշիչներն ապահովելու նպատակով:

4. Չնայած փորձարկումը պետք է կրկնօրինակի իրական սցենարը, այն պետք է լինի
կառավարելի և հստակ: Արդյունքում, առավել հավանական է, որ նրա պայմանները
կլինեն առավել բարենպաստ, քան ականազերծող կազմակերպությունը կարող է
ականյալել իրական գործողությունների ընթացքում:

II. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄԸ

5. ԱՀՇ-ն և նրա հետ աշխատող անձը միասին կազմում են ականների հայտնա-
բերման գործիք: Գործառնական փորձարկումը հիմնականում կենտրոնանում է ԱՀՇ-ի, և
ավելի քիչ՝ նրա հետ աշխատող անձի վրա:

6. Եթե շունը ձախողում է իր աշխատանքը, անկախ նրանից, թե դա տեղի է ունենում շան, թե նրա հետ աշխատող անձի մեղավորության հետևանքով, նա չի անցնում փորձարկումը:

7. Չնայած ԱՀՇ-ի հետ աշխատող անձը փորձարկում չի անցնում, փորձարկման ընթացքում պետք է գնահատվի նրա գործունեությունը: Կարող է պատահել, որ շունը աշխատի պատշաճ կերպով, մինչդեռ նրա հետ աշխատող անձը ձախողի իր գործունեությունը, որը կարող է հանգեցնել նրան, որ շունը չի անցնի այդ փորձարկումը: Սա կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ ԱՀՇ-ի հետ աշխատող անձը չհետևի ԱՀՇ-ի կազմակերպության ԳՍԸ-ներին:

8. Քանի որ ականազերծող կազմակերպություններն օգտագործում են իրենց՝ ԱՀՇ-ի հետ աշխատանքի չափազանց տարբեր մեթոդներ, այս չափորոշիչն ուղեցույցներ չի ներառում կապված ԱՀՇ-ի հետ աշխատող անձանց պոտենցիալ սխալների և նրանց նկատմամբ պատժամիջոցների հետ:

9. ԱՀՇ-ի հետ աշխատողը կարող է կրկնակի անգամ փորձարկվել մեկ այլ ԱՀՇ-ի հետ և ստանալ գործունեության իրականացման թույլտվություն: Սակայն փորձարկումը չանցած ԱՀՇ-ն պետք է անմիջապես վերափորձարկվեն նրա հետ աշխատող մեկ այլ անձի հետ:

10. Ձախողման շտկման միջոցները պետք է կիրառվեն ԱՀՇ-ի, այլ ոչ նրանց հետ աշխատող անձանց նկատմամբ:

11. Եթե շունը և նրա հետ աշխատող անձն անցնում են գործառնական փորձարկումը, ԱՀՇ-ի հետ աշխատող մեկ այլ անձ չի կարող աշխատել այդ ԱՀՇ-ի հետ գործառնական նույն փորձարկման հավաստագրի շրջանակներում:

III. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԸ. ՈՒՐՎԱԳԻԾ

12. Ստանդարտ ընթացակարգն է փորձարկման տեղամասը բաժանել 10 մ x 10 մ դաշտերի վրա, որոնց միջև առկա կլինեն անվտանգ անցուղիներ:

13. Երբեմն այս դաշտերը խմբավորվում են հողակտորների մեջ: Նմանատիպ դաշտերը՝

1) գործնականորեն առավել հաճախ են կիրառվում.

2) հեշտ է սահմանել, վերահսկել և ստուգել, մասնավորապես, երբ մի քանի ԱՀՇ պետք է միաժամանակ փորձարկվեն նույն տեղամասում.

3) կարող են թույլ տալ զննումների իրականացում չորս տարբեր ուղղություններից՝ փորձարկումը դարձնելով նպաստավոր քանո ուղղությունից ավելի քիչ կախված: Հողակտորները կարող են զննվել նույն եղանակով:

IV. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՉԱՓԸ

14. Փորձարկման տեղամասի ընդհանուր չափը սահմանվում է՝ ելնելով փորձարկման անհրաժեշտ դաշտերի քանակությունից, փորձարկման դաշտերի միջև անհրաժեշտ հեռավորությունից և վարչական նպատակներով անհրաժեշտ ցանկացած տեղամասերից:

15. Փորձարկման ընթացքում յուրաքանչյուր շան կողմից զննման ենթակա նվազագույն հողատարածքը հավասար է 400 քառ. մետրի: Ծրագրի ընթացքում փորձարկման բոլոր պահանջները բավարարելու համար անհրաժեշտ փորձարկման դաշտերի թիվը կախված է մի շարք գործոններից, որոնք ներառում են՝

1) փորձարկման ենթակա ԱՀՇ-ի թիվը՝ ներառյալ անհրաժեշտ բոլոր կրկնակի փորձարկումները.

2) փորձարկման պահանջվող հաճախականությունը, որը կարող է ներկայացվել ԱԳԱՄ-ի կողմից.

3) փորձարկման նույն դաշտում իրականացվող առանձին փորձարկումների միջև սպասելու ժամանակը.

4) փորձարկումից առաջ վարժեցման համար լրացուցիչ դաշտեր ստեղծելու պահանջը:

Վ. ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐ

16. Փորձարկման տեղամաս ընտրելիս՝ դիտարկման ենթակա այլ գործոնները ներառում են՝

- 1) ԱՀՇ-ի փորձարկման ժամանակ տարվա եղանակը.
- 2) ակնաազդերծման ժամանակահատվածի տևողությունը և, հետևաբար, փորձարկման եղանակը:

ՎԻՆԱԽՆԱԿԱՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆԸ

17. Փորձարկման նպատակով տեղամասերի ընտրության համար անհրաժեշտ է իրականացնել նախնական հետազոտություն: Հետազոտությունը պետք է դիտարկի՝

- 1) անհրաժեշտ փորձարկման տեղամասի չափը.
- 2) հնարավոր տարածքների օգտագործման աստիճանը.
- 3) անվտանգության հարցերը՝ ներառյալ պարսպապատման և պաշտպանության անհրաժեշտությունը.
- 4) դաշտի պայմաններին համապատասխանելու համար անհրաժեշտ մակերևույթը և բուսականությունը.
- 5) հողի պայմանները՝ սահմանելու համար, թե արդյոք եղանակի փոփոխություններն զգալի ազդեցություն կունենան հողի ամրության վրա.
- 6) ջրահեռացումը՝ տեղամասը կարող է ենթարկվել հեղեղների, ջրով լցման կամ մակերեսային ջրերի բարձր մակարդակի.
- 7) գոյություն ունեցող ցանկացած ականներով կամ ՊՊՄ-ով կամ նավթամթերքով, պարարտանյութերով, քիմիական նյութերով, աղբով և մետաղով՝ ներառյալ փամփուշտներով և բեկորներով աղտոտումը.

8) արդյոք տարածքը պատշաճ կերպով առանձնացված է, կամ կարող է արդյոք այն պաշտպանված լինել խանգարող հանգամանքներից.

9) տեղամասի ստեղծման և պահպանման հետ կապված ծախսերը:

VII. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

18. Փորձարկման տեղամասերի որոշման ընթացքում պետք է հաշվի առնվեն շրջակա միջավայրի հետևյալ դիտարկումները՝

1) լանդշաֆտը: Չնայած ԱՀԸ-ն կարող են օգտագործվել գառիվեր տարածքներում, փորձարկման տեղամասը չպետք է տեղակայված լինի գառիվեր տարածքներում, քանի որ փորձարկման ժամանակ օգտագործվող առարկաները կամ հողը կարող են տեղաշարժվել անձրևի հետևանքով.

2) բուսականությունը: Խիտ բուսականությունը կլիտզնդոտի զննման ընթացքում ԱՀԸ-ի ազատ տեղաշարժմանը և կարող է ազդեցություն ունենալ ազդանշանների ու փորձարկման վերահսկման վրա.

3) հողի տեսակը: Հողի տեսակը պետք է լինի նույնը, ինչ փաստացի աշխատավայրում առկա հողի տեսակը.

4) պայթուցիկ նյութերով անցանկալի աղտոտումը: Փորձարկման տեղամասը պետք է հնարավորինս զերծ լինի պայթուցիկ նյութերով հնարավոր անցանկալի աղտոտումներից: Անհրաժեշտ է խուսափել նախորդ երկու տարվա ընթացքում վնասագերծված տարածքներից, եթե այնտեղ հայտնաբերվել էին ականներ կամ ՊՊՄ, քանի որ հողում պայթուցիկ նյութերով մնացորդային աղտոտման հավանականությունը բարձր է: Անհրաժեշտ է նաև խուսափել այն տարածքներից, որտեղ ականները և ՊՊՄ-ն վերացվել են հենց տեղերում պայթուցիկ նյութերի մնացորդների և հատվածների տարածման հետևանքով.

5) մետաղով աղտոտումը: Փորձարկման տեղամասը պետք է հնարավորինս զերծ լինի մետաղներով աղտոտումից: Բոլոր օտարածին մետաղական առարկաները պետք է հեռացվեն տեսողական զննումից և մետաղներ հայտնաբերող սարքի օգնությամբ հետազոտությունից հետո:

6) այլ անցանկալի աղտոտում: Փորձարկման տեղամասը պետք է հնարավորինս զերծ լինի խառնուրդներով ցանկացած աղտոտումից, ինչպիսիք են՝ նավթամթերքները, պարարտանյութերը կամ քիմիական նյութերը, որոնք կարող են ազդեցություն ունենալ փորձարկման արդյունքների վրա: Եթե տարածքն աղտոտված է նման նյութերով կամ տեղական այրումներով կամ երթևեկության հետևանքով առաջացած գազերով, ապա այդ տարածքը չպետք է օգտագործվի որպես փորձարկման տեղամաս: Եթե գոյություն ունի անցանկալի աղտոտման մակարդակի վերաբերյալ որևիցե կասկած, ապա տարածքը չպետք է օգտագործվի որպես փորձարկման տեղամաս:

7) քամին: Եթե առաջարկված փորձարկման տարածքում հաճախ են կրկնվում ուժեղ քամիները, այն պետք է մերժել որպես փորձարկման տարածք, քանի որ ուժեղ քամիներն ազդեցություն են ունենում ԱՀՇ-ի կողմից ազդանշանների ճշտության վրա:

8) աղմուկը և այլ շեղումները: Փորձարկման տեղամասը պետք է առանձնացված կամ պաշտպանված լինի բարձր ձայներից, երթևեկությունից կամ այլ գործողությունից, որը կարող է զննման ընթացքում շեղել ԱՀՇ-ին կամ նրա հետ աշխատող անձին:

VIII. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

19. Առավել տարածված թիրախային առարկաների ներկայացուցչական օրինակներ (ականներ, ՊՊՄ կամ նրանց մասեր) պետք է օգտագործվեն որպես փորձարկման առարկաներ:

20. Մաքուր պայթուցիկ նյութեր կամ արհեստականորեն պատրաստված հոտեր չպետք է օգտագործվեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ պաշտոնապես հաստատված է, որ դրանք նույնն են, ինչ որոնվող առարկաները:

21. Լավագույն տարբերակը դաշտային գործողությունների արդյունքում վերականգնված փորձարկման առարկաներն օգտագործելն է: Նման առարկաներ առկա չլինելու դեպքում կարող են օգտագործվել կուտակումների կամ պահեստավորման վայրերի առարկաներ:

22. Որպես պլանավորման ուղենիշ՝ 10 մ x 10 մ չափերով դաշտերից կազմված փորձարկման տարածքի յուրաքանչյուր դաշտի համար անհրաժեշտ կլինի առավելագույնս երեք փորձարկման առարկա (սախընտրելի է երկուսից ոչ ավելի):

IX. ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

23. Դաշտային գործողությունների արդյունքում վերականգնված փորձարկման առարկաների և բունկերում պահեստավորված առարկաների հոտերի միջև գոյություն ունի տարբերություն:

24. Դաշտային գործողությունների արդյունքում վերականգնված փորձարկման առարկաները պետք է պահեստավորվեն նոր ականներից կամ պայթուցիկ նյութերից առանձին:

25. Օգտագործումից առաջ փորձարկման առարկաները չպետք է տեղադրված լինեն ներկերին, նավթամթերքին, պարարտանյութերին և քիմիական նյութերին մոտ, քանի որ իրենք կարող են կլանել այդ նյութերից դուրս եկող հոտը և այլևս չունենալ նպատակային առարկային բնորոշ իրական հոտ:

26. Փորձարկման առարկաների հետ աշխատելիս՝ անհրաժեշտ է կրել ռետինե ձեռնոցներ: Ձեռնոցների փոխարեն կարող են օգտագործվել բարակ պլաստիկ պարկեր, սակայն այն պայմանով, որ նրանք լինեն ջրակայուն:

X. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

27. Ախտահանումը կենսական նշանակություն ունի, քանի որ փորձարկման առարկայի կամ լրացուցիչ պարագաների վրա անցած աղտոտման նույնիսկ շատ փոքր քանակներ կարող են ձախողել փորձարկումը:

28. Փորձարկման բոլոր առարկաները, գործիքները, լրացուցիչ պարագաները և ճանաչման ենթակա մասերը պետք է ախտահանվեն օգտագործելուց առաջ:

29. Ախտահանման ընթացակարգերն են՝

1) նախապես եռացված մաքուր ջրով լվանալ և քերել գործիքները, լրացուցիչ պարագաները, ճանաչման ենթակա մասերը և փորձարկման առարկաները.

2) մաքուր ջրում առնվազն 2 x 10 րոպեների ընթացքում եռացնել լվացված բոլոր իրերը՝ բացառությամբ այն փորձարկման առարկաների, որոնք պարունակում են պայթուցիկ նյութեր.

3) յուրաքանչյուր լվացումից կամ եռացնելուց հետո բոլոր իրերն ամբողջությամբ չորացնել.

4) լվանալուց կամ եռացնելուց հետո իրերին պետք է դիպչել ռետինե ձեռնոցներով: Ձեռնոցների փոխարեն կարող են օգտագործվել բարակ պլաստիկ պարկեր, սակայն այն պայմանով, որ նրանք լինեն ջրակայուն:

XI. ՏԵՂԱՄԱՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՉԱՓՈՒՄԸ ԵՎ ՆՇԱԳԾՈՒՄԸ

30. Փորձարկման տեղամասի ուրվագիծը կարող է տարբեր լինել՝ կախված ակննագերծող կազմակերպությունների կողմից օգտագործվող գործառնական զննման համակարգից:

31. Ջննման ուղու ընդունված երկարությունը կազմում է 7-10 մետր, սակայն կարող են լինել այնպիսի համակարգեր, որոնք կիրառում են զննման այլ երկարություններ, կամ,

որոնց դեպքում չեն օգտագործվում փնտրման ուղիներ: Մակայն նման համակարգերը սովորաբար բավականին ճկուն են դաշտերից բաղկացած փորձարկման տեղամասերում աշխատելու համար:

32. Փորձարկման դաշտերից կազմված տեղամասի նախապատրաստման ընթացքում պետք է կիրառվեն հետևյալ չափման կանոնները՝

1) յուրաքանչյուր փորձարկման դաշտ պետք է նշվի քարտեզի վրա՝ տեղակայման հստակ նշումներով.

2) բոլոր անկյունները պետք է նշվեն մետաղե նշայտներով, որոնք խորասուզված կլինեն հողի մեջ այնքանով, որ այունի վերին մասը կգտնվի հողի մակերևույթի մակարդակի վրա: Առնվազն մեկ անկյունանիշ պետք է ճշտորեն գրանցվի փորձարկման դաշտի քարտեզի վրա.

3) փորձարկման տեղամասը պետք է ունենա մեկ կամ ավելի հստակորեն սահմանված նշագծեր: Պետք է գրանցվի յուրաքանչյուր փորձարկման դաշտի առնվազն մեկ անկյունային նիշից դեպի նշագիծը հեռավորությունը և կողմնացույցի ցույց տված ուղղությունը.

4) փորձարկման դաշտի բոլոր կողմերը պետք է ժամանակավորապես նշվեն ժապավենի կամ միանման նյութի օգնությամբ՝ նախքան փորձարկման առարկաների տեղակայումը: Այս նշագծումը կարող է հանվել փորձարկման առարկաների տեղակայման ժամանակ.

5) փորձարկման բոլոր առարկաների և ճանաչման ենթակա իրերի տեղակայումը դաշտում կամ հողակտորի վրա պետք է իրականացվի 20 մմ ճշտությամբ 10 մ երկարության վրա, և դրանք պետք է գրանցվեն փորձարկման դաշտի քարտեզի վրա:

33. Փորձարկման դաշտերի միջև եղած հեռավորությունը պետք է լինի առնվազն 3 մ բացառությամբ այն դեպքերի, երբ դաշտերը խմբավորվում են հողակտորների մեջ: Փորձարկ-

ման դաշտերի միջև գտնվող անցուղիները պետք է թույլ տան շանը և նրա հետ աշխատող անձին ազատորեն տեղաշարժվել դաշտի սահմանագծերով և նվազեցնեն պարգևատրվող ԱՀՇ-ի կողմից հարակից դաշտեր մուտք գործելու կամ ԱՀՇ-ի հետ աշխատող անձի կողմից հարևան դաշտում պատահականորեն ոտք դնելու ռիսկը:

XII. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԴԱՇՏՈՒՄ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԹԻՎԸ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ

34. 400 քառ. մետրից ոչ պակաս մակերեսով փորձարկման տեղամասում փորձարկման առարկաների թիվը պետք է լինի հինգից յոթը:

35. Փորձարկման դաշտում յուրաքանչյուր փորձարկման առարկայի գտնվելու վայրը պետք է լինի պատահական և անկանխատեսելի:

36. Փորձարկման դաշտում կամ երկու հարակից փորձարկման դաշտերի փորձարկման առարկաների միջև նվազագույն հեռավորությունը պետք է լինի 3 մետր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փորձարկվում է իրար մոտ տեղադրված թիրախների տարբերակումը:

37. Փորձարկման առարկաները պետք է թաղված լինեն տարբեր խորությունների վրա: Խորությունները պետք է համապատասխանեն իրական գործողությունների իրականացման ժամանակ հանդիպող խորություններին:

38. Ճանաչման ենթակա կտորները մետաղի փոքր կտորներ են, որոնք փորձարկման առարկաների հետ միասին տեղադրված են հողի մեջ այնպես, որ նրանց տեղակայումը կարող է հայտնաբերվել մետաղ հայտնաբերող սարքերի միջոցով:

39. Դրանք պետք է օգտագործվեն այն փորձարկման առարկաների հետ, որոնք ընդհանրապես չունեն, կամ էլ ունեն մետաղի ցածր պարունակություն, այնպես, որ փորձարկման առարկայի հստակ տեղակայումը հնարավոր լինի ստուգել՝ առանց հողաձածկույթը վնասելու:

40. Ճանաչման ենթակա կտորներն օգտագործելիս՝ պետք է կիրառվեն հետևյալ ընթացակարգերը՝

1) փորձարկման դաշտում ճանաչման ենթակա բոլոր կտորները պետք է լինեն միևնույն մետաղից: Խորհուրդ է տրվում օգտագործել երկաթյա ամրանի մի հատված կամ միանման նյութ.

2) ճանաչման ենթակա ցանկացած կտոր պետք է կշռի 15 գ-ից ոչ ավելի.

3) ճանաչման ենթակա ցանկացած կտոր պետք է ավտահանվի՝ սույն չափորոշչով սահմանված կարգով.

4) ճանաչման ենթակա կտորը պետք է տեղադրվի հողի մեջ՝ փորձարկման առարկայի տակ՝ նրա կենտրոնում:

41. Անհրաժեշտ է ապահովել, որ ԱՀՇ-ն հայտնաբերեն փորձարկման առարկաները, այլ ոչ թե ճանաչման ենթակա կտորները: Եթե փորձարկման դաշտում ճանաչման ենթակա կտորներն օգտագործվում են փորձարկման առարկաների հետ միասին, որպես ստուգման առարկաներ, փորձարկման դաշտի այլ վայրերում պետք է տեղադրված լինեն առնվազն երկու լրացուցիչ ճանաչման ենթակա կտորներ: Ճանաչման ենթակա այս կտորների տեղակայումը ևս պետք է գրանցվի:

XIII. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ ՀՈՂԻ ՄԵՋ

42. Փորձարկման առարկայի տեղակայման ընթացքում պետք է կիրառվեն հետևյալ ընթացակարգերը՝

1) ռետինե ձեռնոցները կամ կրկնակի շերտով պլաստիկ պարկերը պետք է ծածկեն ձեռքերը՝ հողի հետ ցանկացած աշխատանքի ընթացքում: Նավթային նյութերից պատրաստված ձեռնոցները կամ պլաստիկ պարկերը չպետք է օգտագործվեն, քանի որ ունեն յուրահատուկ հոտ: Եթե հողի փորման ընթացքում ձեռքերը պաշտպանող միջոցը վնասվում է, այն պետք է անմիջապես փոխարինվի.

2) հողի վնասումը պետք է նվազագույնի հասցվի: Հնարավորության դեպքում հողի վերին շերտը պետք է պահպանվի մեկ կտորով.

3) փորձարկման առարկայի ավելացման հետևանքով առաջացած հողի ավելցուկը պետք է հանվի փորձարկման տեղամասից, այլ ոչ թե տարածվի դաշտում կամ հարակից դաշտերում.

4) նախնական հողը պետք է օգտագործվի փորձարկման առարկայի շուրջը լցնելու համար: Վերին՝ փակող շերտը պետք է տեղադրվի փորձարկման առարկայի վրա.

5) փորձարկման տեղամասի նախապատրաստման և փորձարկման առարկաների հետ աշխատելու ընթացքում պետք է օգտագործվեն միայն ախտահանված սարքավորումներ:

XIV. ՀՈՂԻ ՄԵՋ ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՊԱՀԱՆՔՆԵՐԸ

43. Տեղակայման անհրաժեշտ ժամանակը կախված է հողի խոնավությունից և հողի (օդի) ջերմաստիճանից, որը նպաստում է նպատակային հոտի տարածմանը՝ փորձարկման առարկայից դեպի հողի մակերես:

44. ԱՀՇ-ի փորձարկման տեղամասը պետք է ունենա տեղակայման առնվազն երեք ամսվա ժամկետ՝ նախքան օգտագործման թույլտվություն ստանալը, որպեսզի՝

1) թիրախային հոտը ներթափանցի հողի մակերևույթ, մտնի մակերեսային շերտի մեջ և սկսի գոլորշիանալ օդի մեջ.

2) անհետանան թիրախային առարկաների թաղման հետևանքով առաջացած հողային շերտի ցանկացած վնասվածքները: Ցանկալի է ապահովել տեղակայման առավել երկար ժամանակը, օրինակ՝ վեց ամիս կամ ավելի: Քիչ անձրևներ ունեցող կամ առհասարակ անձրևներ չունեցող տարածքներում փորձարկման տեղամասը խորասուզման ժամանակահատվածի ընթացքում մի քանի անգամ պետք է ջրվի:

45. Թիրախային բոլոր առարկաների համար անհրաժեշտ է տեղակայման նույն ժամանակահատվածը՝ անկախ նրանից, թե այդ առարկաները թաղված են, մասամբ են թաղված կամ տեղադրված են հողմի մակերևույթին, հետևաբար, ոչ մի թիրախային առարկա չպետք է տեղափոխվի կամ տեղաշարժվի:

XV. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ

46. Փորձարկման տեղամասը պետք է մանրամասն գրանցվի և քարտեզագրվի: Գրանցումների կատարման կարգը սահմանում է ԱԳԱՄ-ը: Գրանցումները պետք է ներառեն՝

1) փորձարկման տեղամասի քարտեզը, որը ցույց է տալիս տեղագրական բոլոր ուռուցիկ մասերը, փորձարկման տեղամասի սահմանները, փորձարկման դաշտերի թիվը, փորձարկման դաշտերի սահմանները, նշագծերը, վարչական տարածքները և համապատասխան օժանդակ տեղեկատվությունը, ինչպիսին է՝ քանու գերակշռող ուղղությունը.

2) յուրաքանչյուր փորձարկման դաշտի քարտեզը, որը ցույց է տալիս փորձարկման դաշտի համարը, փորձարկման դաշտի նշումների հստակ տեղը, նշագծերի հղումները, փորձարկման առարկաների տեղակայումը, խորությունը, տեսակը և յուրաքանչյուր փորձարկման առարկայի վիճակը, ճանաչման ենթակա ցանկացած մասնիկը, որը տեղադրված է փորձարկման առարկայի տակ կամ դաշտի մեկ այլ մասում, դաշտի նախապատրաստման համար պատասխանատու անձանց տվյալները և դաշտի նախապատրաստման ամսաթիվը.

3) փորձարկման դաշտում յուրաքանչյուր փորձարկումից հետո պետք է կատարվի ցանկացած սխալ ազդանշանի տեղի և շրջակա միջավայրի տվյալների գրանցում՝ տվյալ փորձարկման դաշտում բոլոր հետագա փորձարկումներին աջակցելու նպատակով:

47. ԱՀՇ-ի գործառնական փորձարկման վստահելիությունը կախված է գրանցումների սահմանափակ մատչելիությունից՝ ներառյալ փորձարկման դաշտերում փորձարկման առարկաների տեղակայման և թվերի վերաբերյալ գրանցումները: Միայն մի քանի անձ պետք է ներգրավված լինի այս դաշտերը նախապատրաստելու գործում, և նրանցից 14_0454.2

ոչ որ չպետք է կապված լինի փորձարկման ենթակա ցանկացած ակնազերծող կազմակերպության հետ:

48. Պետք է պատրաստված լինեն գրանցումների և քարտեզների երկու օրինակներ՝ նախընտրելի է միայն փորձարկման կառավարչի կողմից: Երկու օրինակները պետք է փորձարկող մարմնի կողմից պահվեն առանձին և ապահով վայրերում:

49. Փորձարկման կառավարիչը պետք է լինի միակ անձը, ով կարող է օգտվել այդ փաստաթղթերից: Փաստաթղթերը պետք է պահպանվեն այն կերպ, որ ոչ ոք չկարողանա ձեռք բերել դրանք՝ առանց փորձարկման կառավարչի թույլտվության, կամ առանց փորձարկող մարմնի կողմից ստացված գրավոր թույլտվության:

50. Հողի մեխանիկական մշակումից հետո ԱՀՇ-ի զննումների համար գործառնական փորձարկումը որոշակի տարբեր մոտեցումներ է ունեցել ԱՀՇ-ի տրամալ զննումների նկատմամբ:

XVI. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԵՎ ՎԻՃԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

51. ԱՀՇ-ի փորձարկման վայրերը պետք է պարբերաբար հետազոտվեն տեղամասի համար պատասխանատու կազմակերպության անձնակազմի կողմից՝ ապահովելու համար նրանց պատշաճ ապահովությունը և արտաքին ազդեցություններից զերծ լինելը:

52. Կարող է անհրաժեշտ լինել ցանկապատել փորձարկման տեղամասը կամ անվտանգության աշխատողներ ներգրավել՝ դեպի այդ տարածք չլիազորված մուտքն արգելելու համար: Այս պահանջները կախված կլինեն իրավիճակից և պետք է սահմանվեն փորձարկման տեղամասի համար պատասխանատու կազմակերպության կողմից:

53. Բոլոր փորձարկման առարկաները և ճանաչման ենթակա մասնիկները պետք է մետաղ հայտնաբերող սարքի օգնությամբ հայտնաբերվեն առնվազն տարեկան մեկ անգամ, նախընտրելի է առավել ուժեղ անձրևից կամ ձյունից հետո ընկած ժամանակահատվածում:

54. Տեղակայումները պետք է այնուհետև համեմատվեն գրանցումների հետ՝ ապահովելու համար տեղաշարժերի բացակայությունը կամ այն, որ ոչ մի օտարածին մարմին չի ներթափանցել փորձարկման դաշտ:

55. Եթե փորձարկման տեղամաս մուտք են գործել չլիազորված անձինք, այն պետք է մանրակրկիտ ստուգում անցնի՝ ապահովելու համար նրա համապատասխանությունն ԱՀՇ-ի փորձարկման համար:

56. ԱՀՇ-ի փորձարկման տեղամասերում բուսականությունը պետք է կտրվի բուսականության կտրման նույն սարքերով և մեթոդներով, որոնք օգտագործվում են գործողությունների ժամանակ:

57. Բուսականությունը չպետք է կտրվի անմիջապես փորձարկումից առաջ: Նույն ժամանակահատվածը, որը պահպանվում է բուսականության կտրման և վնասագերծման գործողությունների իրականացման միջև, պետք է կիրառվի նաև բուսականության կտրման և փորձարկման տեղամասում փորձարկում իրականացնելու համար:

58. Որոշ միջավայրերում կարող է ընդունելի լինել արածող կենդանիների մուտքը փորձարկման տեղամասեր՝ նվազեցնելու համար բուսականության կտրման անհրաժեշտությունը: Արածող կենդանիները կարող են որոշակի աղտոտումներ առաջացնել, սակայն չպետք է դիտարկվեն որպես խնդիր, մասնավորապես, եթե արածող կենդանիները հաճախ են հանդիպում այն տեղամասերում, որտեղ սովորաբար աշխատում են ԱՀՇ-ն:

XVII. ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՀՏՎՈՒՄԸ

59. Բոլոր ԱՀՇ-ի գործառնական փորձարկումները պետք է վերահսկվեն փորձարկումների որակավորված կառավարչի կողմից, ում պարտականությունն է պատրաստել

փորձարկման տեղամասը, ղեկավարել փորձարկումները և փորձարկման ընթացքում գնահատել ԱՀՇ-ին:

60. Փորձարկման կառավարիչը պետք է տիրապետի համապատասխան գիտելիքների, ունակությունների և փորձի՝ կարողանալու համար արհեստավարժորեն գնահատել ԱՀՇ-ի թիմերը, և կարևոր է, որ նա անկողմնակալ լինի ականազերծող կազմակերպությունների նկատմամբ:

61. Փորձարկման կառավարիչը պատասխանատու է փորձարկման մարմին առաջարկություններ ներկայացնելու համար՝ ելնելով փորձարկումների արդյունքներից և սահմանված անցնելու (ձախողման) չափանիշներից:

62. Ականազերծող կազմակերպությունները չպետք է օգտագործեն գործառնական փորձարկման տեղամասերը՝ վարժեցման կամ ներքին փորձարկման համար՝ առանց փորձարկման կառավարչի վերահսկման:

63. Եթե նախկինում փորձարկման համար օգտագործվող, սակայն փորձարկման հիմնական դաշտի տարածքից առանձին փորձարկման տեղամասի մի հատված պետք է հատկացվի վարժեցման կամ ներքին փորձարկման նպատակներով, այս հատվածն այլևս չի օգտագործվի փորձարկման համար, այլ միայն՝ վարժեցման համար:

64. Փորձարկման կառավարիչը փորձարկման տեղամասը պետք է հետազոտի փորձարկումից առնվազն մեկ օր առաջ՝ ապահովելու համար, որ փորձարկման տեղամասը պատշաճ կերպով նախապատրաստված է և պատրաստ է օգտագործման: Փորձարկման կառավարիչը պետք է վերանայի փորձարկվող կազմակերպության ԳՍԸ-ների բոլոր ուղղությունները, որոնք համապատասխանում են սույն փորձարկմանը:

65. Փորձարկման կառավարիչը պետք է փորձարկման վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն տրամադրի ականազերծող կազմակերպությանը: Հակիրճ տեղեկատվությունը պետք է ներառի հետևյալ տվյալները՝

- 1) փորձարկման տեղամասի ստանդարտ աշխատանքային ընթացակարգերը,
- 2) փորձարկման մանրամասն ընթացակարգերը.
- 3) փորձարկման դաշտերի նշագծումը.
- 4) վարչական տարածքները.
- 5) այցելուների համար դիտելու վայրերը.
- 6) ԱՀՇ-ի և նրանց հետ աշխատողների համար հանգստի տարածքները.
- 7) փորձարկման տեղամասի ներսում տեղաշարժվելու սահմանափակումները:

66. Հակիրճ տեղեկատվության տրամադրման ընթացքում փորձարկման կառավարիչը և յուրաքանչյուր ականագերծող կազմակերպություն պետք է համատեղ համաձայնեն փորձարկման համար եղանակի և տեղամասի պայմանների հարմարության վերաբերյալ:

67. Որտեղ հնարավոր է, անհրաժեշտ է կիրառել եղանակի կանխատեսման կայան, որը փորձարկումից առաջ և նրա ընթացքում շարունակաբար նորացվող տվյալներ է տրամադրում եղանակի մասին: Սա ապահովում է եղանակի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության առկայությունը, եթե փորձարկման արդյունքները վերագրվում են շրջակա միջավայրի հետ կապված հարցերին:

68. Փորձարկման արդյունքները կարող են վիճարկվել միայն այն դեպքում, երբ եղանակի պայմանները գտնվում են ականագերծող կազմակերպության ԳՍԸ-ներում նշված պարամետրերից դուրս:

69. Փորձարկման ընթացքը կարող է լուսանկարվել կամ նկարահանվել վերահսկման և ուսուցողական նպատակներով՝ երաշխավորելով, որ դրանք չեն խափանի փորձարկման ընթացքը:

70. Փորձարկումը պետք է վերահսկվի փորձարկման կառավարչի կամ նրա կողմից նշանակված որակավորված գնահատողի կողմից՝ ստուգելու համար, թե արդյոք ԱՀՇ-ի գննումն իրականացվում է ըստ ականագերծող կազմակերպության ԳՍԸ-ների:

71. Վերահսկումը պետք է իրականացվի այնպիսի եղանակով, որ զննման ընթացքում չշեղի ԱՀԸ-ին կամ նրա հետ աշխատող անձին:

72. Անհրաժեշտության դեպքում վերահսկողը (գնահատողը) պետք է նախկինում նույն դաշտում փորձարկված ԱՀԸ-ի կողմից տրամադրված նշանների գրանցում կատարի՝ ԱՀԸ-ի կողմից տրամադրված ցանկացած սխալ կամ անհայտ դրական նշանների հաստատմանն օժանդակելու նպատակով:

XVIII. ԴԻՏՈՐԴՆԵՐԸ

73. Ականազերծող կազմակերպության ներկայացուցիչները և ցանկացած այլ դիտորդներ, ովքեր ընդունելի են փորձարկող կազմակերպության համար, կարող են դիտել փորձարկումը՝ այն պայմանով, որ իրենք կհետևեն տեղամասի համար գործունեության բոլոր ստանդարտ ընթացակարգերում նշված կանոններին, փորձարկման կառավարչի կողմից թույլտվություն կստանան դիտարկումներ կատարելու համար և չեն խափանի փորձարկումը կամ ազդեցություն չեն ունենա փորձարկման վրա:

74. Եթե փորձարկման ղեկավարը գտնում է, որ դիտորդներից որևիցե մեկը խանգարում է փորձարկմանը, նա կարող է խնդրել այդ դիտորդին տեղափոխվել մեկ այլ դիտարկման կետ կամ ընդհանրապես լքել տեղամասը:

XIX. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱԳՆԵԼԸ

75. Փորձարկման ավարտից հետո կառավարիչը պետք է մանրամասն հաշվետվություն ներկայացնի ԱՀԸ-ի հետ աշխատողներին և ներկա ականազերծող կազմակերպությունների այլ անդամներին: Հաշվետվությունը պետք է ներառի փորձարկման արդյունքները, դաշտի գրանցումների վերանայումը և պետք է ներկայացնի զննման բնույթին վերաբերող ուղղությունները: Հաշվետվության լրացման կարգը սահմանում է ԱԳԱՄ-ը:

76. ԱՀԸ-ի հետ աշխատողը պետք է խրախուսվի փորձարկման վերաբերյալ իր սեփական կարծիքը ներկայացնելու համար: Փորձարկման կառավարիչը պետք է լինի անկեղծ և բաց՝ իր տեսակետներն օբյեկտիվորեն ներկայացնելու համար:

77. Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում պետք է առաջարկվեն ուղղիչ միջոցառումներ:

78. Մանրամասն հաշվետվությունը ներկայացնելուն պետք է հետևի փորձարկման վերաբերյալ գրավոր հաշվետվությունն ականազերծող կազմակերպությանը և փորձարկող մարմին ներկայացնելուն:

XX. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ

79. Փորձարկման արդյունքների փաստաթուղթը պետք է պարունակի տեղ՝ ԱՀԸ-ի հետ աշխատողի մեկնաբանությունների համար:

80. Եթե ԱՀԸ-ի հետ աշխատողը որոշակի մեկնաբանություններ ունի փորձարկման ցանկացած ուղղության վերաբերյալ, մանրամասները կարող են գրանցվել փորձարկման արդյունքների փաստաթղթում:

81. ԱՀԸ-ի հետ աշխատողը պետք է ստորագրի փորձարկման արդյունքների փաստաթուղթը՝ որպես հավաստում, որ նա ծանոթացել է փորձարկման արդյունքների հետ և հնարավորություն է ունեցել մեկնաբանել դրանք:

XXI. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱԿԱՆԱԶԵՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՍԸ-ՆԵՐԻՆ

82. ԱՀԸ-ն և նրանց հետ աշխատող անձը պետք է զննումն իրականացնեն ըստ ականազերծող կազմակերպության ԳՍԸ-ներում նկարագրված ընթացակարգերի: Սակայն զննմանն օժանդակելու նպատակով կարող են պահանջվել ԳՍԸ-ներից որոշակի

շեղումներ: Օրինակ՝ շունը կշարունակի փորձարկման դաշտի զննումը՝ ցուցում ստանալուց հետո, երբ ըստ ԳՄՀ-ների այն կարող է դուրս բերվել այնտեղից:

83. Փորձարկման պահանջների բավարարման նպատակով ԳՄՀ-ների փոփոխությունները պետք է փորձարկման մարմնի կողմից համաձայնեցվեն ակննազերծող կազմակերպության հետ՝ փորձարկումից բավականին շուտ՝ անհրաժեշտ ցանկացած վերավարժեցում թույլ տալու նպատակով:

84. **Քամու ուղղություն:** Փորձարկումից առաջ ԱՀՇ-ի հետ աշխատողները, ԳՄՀ-ների համաձայն, պետք է գնահատեն քամու ուղղությունը և շրջակա միջավայրի այլ գործոններ և օգտագործեն իրենց դատողությունը՝ զննման ուղղությունը որոշելիս: ԱՀՇ-ի հետ աշխատողը կարող է ցանկացած պահին փոխել զննման ուղղությունը:

85. **Զննման ընդմիջում:** ԱՀՇ-ի հետ աշխատող անձը կարող է զննման ցանկացած պահին ընդմիջել՝ շանը հանգստանալու հնարավորություն և ջուր տալու նպատակով:

86. Եթե ԱՀՇ-ի հետ աշխատող մեկ անձ փորձարկում է երկու ԱՀՇ, ապա այդ անձը կարող է թույլ տալ առաջին ԱՀՇ-ին հանգստանալ և զննումն սկսել մեկ այլ դաշտում երկրորդ ԱՀՇ-ի հետ:

87. **Փորձարկման նվազագույն պահանջներ:** Յուրաքանչյուր շան կողմից զննվող նվազագույն տարածքը պետք է լինի առնվազն 400 քառ. մետր: Այս թիվը հիմնված է ակննազերծման տիպիկ ծրագրերի ընթացքում ԱՀՇ-ին բնորոշ նվազագույն արտադրողականության վրա: Փորձարկման ընթացքում յուրաքանչյուր շուն պետք է ակտիվորեն աշխատի առնվազն մեկ ժամվա ընթացքում (առանց հանգստի ժամանակի): Փորձարկման ընթացքում յուրաքանչյուր շուն պետք է հայտնաբերի առնվազն հինգ թիրախային առարկա:

88. Բացառիկ իրավիճակներում շունը կարող է անհրաժեշտ ժամանակահատվածի ընթացքում ի վիճակի լինել զննել ավելի փոքր փորձարկման տարածք: Այս դեպքում այդ շունը պետք է թույլտվություն ստանա աշխատել միայն ավելի փոքր տարածքների վրա:

89. Փորձարկման դադարեցում: ԱՀՇ-ի հետ աշխատող անձը կարող է ցանկացած պահին դադարեցնել փորձարկումը, եթե նա զգում է, որ շունը չի կարողանում կենտրոնանալ կամ որոշակի պատճառներով չի աշխատում պատշաճ կերպով:

90. ԱՀՇ-ի հետ աշխատող անձը կարող է փորձարկումը դադարեցնել մեկ շան համար և այն ավարտել մեկ այլ շան հետ այն դեպքում, եթե երկրորդ շունը կարող է իրականացնել ամբողջ փորձարկումը:

91. Փորձարկման դադարեցումը չի համարվում փորձարկման ձախողում, և ականազերծող կազմակերպությունը կարող է ցանկացած ժամանակ նոր փորձարկում պահանջել այդ ԱՀՇ-ի համար:

92. Պետք է կիրառվեն փորձարկումն անցնելու (ձախողելու) հետևյալ չափանիշները՝

1) շունը պետք է ցույց տա դաշտում գտնվող բոլոր փորձարկման առարկաները՝ թույլ տալով երկու կամ ավելի քիչ սխալներ.

2) բոլոր դրական ցուցմունքները պետք է լինեն փորձարկման առարկայի հստակ տեղակայումից 1 մ շառավղով տարածքում.

3) ցանկացած շուն և նրա հետ աշխատող անձ, որոնք չեն կիրառում ականազերծող կազմակերպության ԳՍԸ-ներում նշված զննման եղանակները և ընթացակարգերը, համարվում են փորձարկումը ձախողած:

93. Երբ ԱՀՇ-ի հետ աշխատող անձը պնդում է, որ սխալ ցուցմունքն իրականում ճիշտ է եղել, ԱՀՇ-ի հետ աշխատող անձը պետք է իրավունք ունենա զննելու ցույց տրված հատվածը: Սա կարող է իրականացվել միայն փորձարկման ավարտից հետո:

94. Եթե տեղամասի զննումից հետո փորձարկման կառավարիչը համաձայնում է, որ սխալ ցուցմունքը կարող էր թիրախային հոսի պատճառ հանդիսանալ, սխալ ցուցմունքը պետք է անտեսվի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՀՈՏԻ
ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ**

**I. ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՀՈՏԻ
ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

1. Հեռավորության վրա գտնվող պայթուցիկ նյութերի հայտնաբերման համակարգը (ՀՊՆՀՀ) ներառում է վտանգի առկայության կասկածներ ունեցող տարածքների հողի մակերեսից ստացված օդի և փոշու նմուշների փորձարկումը, որոնք կարող են պարունակել թիրախային հոտը՝ օգտագործելով նմուշների ստացման մեքենաների վրա տեղակայված կամ շարժական սարքեր:

2. Նմուշների ստացման մեքենաները ներքաշում են օդը և փոշին այնպիսի ֆիլտրերի օգնությամբ, որոնք մշակվել են օդում պարունակվող փոշու մասնիկների և ցանկացած թիրախային հոտի ներփակման համար:

3. Նմուշների ստացման մեքենաները տեղափոխվում կամ վարվում են նախապես սահմանված չափեր ունեցող հողատարածքի հատվածներով քայլելու կամ վարելու կայուն արագությամբ, մինչև այդ գոտու ամբողջ տարածության անցումը: Առաջ շարժվելիս՝ ֆիլտրը, որն ամրացված է նմուշների ստացման մեքենայի խողովակի գլխին, տեղաշարժվում է մեկ կողմից մյուսը՝ ապահովելու համար ամբողջ տեղամասի ներառումը:

4. Յուրաքանչյուր հատվածից հետո ֆիլտրերը փոխվում են, և օգտագործված ֆիլտրերը պիտակավորվում ու տեղադրվում են կոնտեյներների մեջ:

5. Յուրաքանչյուր ֆիլտրի վրա նշվում է հողակտորի համարը: Հողակտորի և ֆիլտրի համատեղությունն ապահովելու համար գրանցվում է համապատասխան հետազոտության մասին տեղեկատվությունը:

6. Նմուշների ստացումն ավարտելուց հետո ֆիլտրերը տեղափոխվում են կենտրոնական տեղամաս՝ հատուկ վարժեցված հոտոտող կենդանիների (շների կամ առնետների) կողմից հետազոտելու նպատակով:

7. Կենդանիները վարժեցված են ֆիլտրերը հոտոտելու և նշելու ուղղությամբ, որպեսզի ցույց տան, թե որ ֆիլտրերն են պարունակում թիրախային հոտի հետքեր:

8. Եթե կենդանիները ցույց են տալիս թիրախային հոտ պարունակող ֆիլտր, այդ ֆիլտրի միջոցով ներկայացվող հողակտորը կհամարվի որպես դրական և ականներ կամ ՊՊՄ պարունակելու հավանականություն ունեցող:

9. Ֆիլտրերի վերլուծությունից հետո որպես դրական նշված բոլոր հողակտորներում պահանջվում է իրականացնել հետագա հետազոտություններ՝ օգտագործելով ձեռքով կատարվող, մեխանիկական կամ ականներ հայտնաբերող շների (ԱՀՇ) տեխնիկան:

10. Որոշ հետազոտություններ կարող են իրականացվել նաև բացասական հողակտորների վրա՝ որպես որակի լրացուցիչ ստուգումներ: Ապահովելու համար նմուշների ստացման՝ ձեռքով իրականացվող գործընթացի անվտանգությունը, նմուշների ստացումից առաջ վտանգավոր տարածքներում ձեռքով նմուշների ստացման թիմերի համար բացվում են անցուղիներ:

II. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

11. Համակարգն ունի հինգ առանցքային բաղադրիչներ՝

- 1) անցուղիների ստեղծում.
- 2) հոտի հավաքում.
- 3) վերլուծություն.

4) հետագա հետազոտություն.

5) տվյալների կառավարում:

12. Անցուղիների ստեղծման հիմնական խնդիրներից մեկն է՝ հասնել այն տարածքներին, որտեղից պետք է իրականացվի հոտի հավաքումը: Անվտանգ հասանելիությունն ապահովվում է անցուղիների ստեղծման թիմի կողմից, որի հիմնական պատասխանատվությունն անվտանգ անցուղիներ ապահովելն է՝ հոտի հավաքման թիմերի համար:

13. Հոտի հավաքման հիմնական գործառույթն է՝ ապահովել, որ օդը (և հաճախ փոշին) պարբերաբար հավաքվի հետազոտվող ամբողջ հողակտորի մակերեսից: Ընդ որում, փոշում գտնվող մասնիկները կրում են իրենց ամրացած ավելի մեծ թվով պայթուցիկ քիմիական նյութերի մոլեկուլներ, քան այդ մոլեկուլերին առանձին առկա են օդի մեջ: Սակայն փոշին կարող է առաջացնել ֆիլտրի խցանում: Եթե նմուշների ստացումը պետք է իրականացվի փոշոտ միջավայրում, խորհուրդ է տրվում ֆիլտրերը փոխել այն ժամանակ, երբ ֆիլտրի միջով օդի հոսքի մակարդակը նվազում է մինչև մաքուր ֆիլտրի միջով օդի հոսքի մակարդակի 80 տոկոսը:

14. Վերլուծությունն իրականացվում է հատուկ վարժեցված հոտոտող կենդանիների կողմից՝ սահմանելու համար, թե արդյոք ֆիլտրը պարունակում է թիրախային հոտ: Կարող է հնարավոր լինել վերլուծել ֆիլտրերը՝ քիմիական լաբորատորիաներում կամ այլ վերահսկվող միջավայրում հետազոտություն իրականացնելով:

15. Հետագա հետազոտության նպատակն է ստուգել դրական տեղամասերը և վնասագերծել նրանց վրա հայտնաբերված բոլոր ականները և ՊՊՄ-ն:

16. Սույն չափորոշիչը չի ներառում հետագա վերահսկողության թիմերի կողմից իրականացվող գործողությունները:

17. Որակի վերահսկման (ՈՎ) նպատակներով կարող են հետազոտվել նաև որոշ բացասական տեղամասեր: ՀՊՆՀՀ-ի միջոցառումների համար որակի կառավարումը հաստատում է ԱԳԱՄ-ը:

18. Տվյալների կառավարման համակարգը պետք է ապահովի ֆիլտրի և նրան համապատասխանող տեղամասի հետևումը՝ հոտի նմուշի ստացման պահից մինչև վերահսկումը և հետագա հետազոտությունը:

19. Անհրաժեշտ է գրանցումներ կատարել հայտնաբերված ականների և ՊՊՄ-ի, ինչպես նաև դրանց գտնվելու վայրի վերաբերյալ (թե արդյոք դրանք գտնվում են դրական թե՛ բացասական տեղամասերում):

20. Արդյունքները պետք է տրամադրվեն ՀՊՆՀՀ-ի ծրագրի կառավարչին և որակի ապահովման (ՈԱ)/ՈԿ արտաքին գործակալություններին՝ ստուգելու համար ՀՊՆՀՀ-ի համակարգի վստահելիությունը: Հետագա հետազոտության արդյունքները պետք է օգտագործվեն որպես ՀՊՆՀՀ-ի համակարգի ՈԿ-ի մի մաս:

III. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

21. ՀՊՆՀՀ-ի համակարգի առաջնային օգտագործումն ուղղված է թիրախային հոտի հետքեր չպարունակող հողատարածքի հատվածները բացառելուն: Այն լավագույնս օգտագործվում է այն տեղամասերում, որտեղ ականների և ՊՊՄ-ի խտությունը ենթադրաբար ցածր է:

22. Առաջարկվում են համակարգի հետևյալ կիրառությունները՝

1) ճանապարհի հատվածների բացառում: ՀՊՆՀՀ-ի համակարգը ճանապարհի մեծ հատվածի հետազոտման արագ և ծախսարդյունավետ եղանակ է: ՀՊՆՀՀ-ն ավելի փոքր կիրառություն ունի խիտ ականապատված ճանապարհների համար, ինչպես նաև այն ճանապարհների համար, որտեղ նախկինում իրականացվել են լայնածավալ ռազմական գործողություններ: Ճանապարհների նման հատվածների վրա, ամենայն հավանական

նությամբ, չափազանց տարածված է թիրախային հոտը, և շատ քիչ հատվածներ կբացառվեն հետազոտման ընթացքում.

2) հաստատում կամ տարածքի մակերեսի նվազեցում: Հստակ տեղեկատվության բացակայության պատճառով հաճախ մաքրվում են ականներ կամ ՊՊՄ չպարունակող տարածքներ: Չնայած որ ՀՊՆՀՀ-ի համակարգը կիրառելի չէ ականների կանոնավոր կամ սխեմատիկ դասավորություն ունեցող ականապատ տարածքների համար, այն կարող է օգտագործվել այն տեղերում, որտեղ նպատակ է հետապնդվում բացահայտելու, թե արդյոք խոշոր տարածքի վրա առկա են ականներ (ՊՊՄ), կամ ականապատ տարածքների սահմանները որոշելու համար (տարածքի չափի փոքրացում).

3) հարակից տարածքներում պայթուցիկ նյութերի հայտնաբերում: Ներփակված օդով փակ տարածքները կարող են կատարյալ լինել ՀՊՆՀՀ-ի համակարգի կիրառման համար:

IV. ՕԳԻ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՄՏԱՑՈՒՄԸ

23. Օդի նմուշների ստացման գործընթացը ղեկավարվում է դաշտային գործողությունների կառավարչի կողմից, որի պարտականությունները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալ կետերով՝

- 1) օդի նմուշների ստացման ընդհանուր գործընթացի պլանավորում և կառավարում.
- 2) անցուղիների ստեղծման և հոտի հավաքման թիմերի գործողությունների համակարգում.
- 3) անվտանգության և ապահովության պատշաճ միջոցների կիրառման ապահովում.
- 4) անհետաձգելի բժշկական օգնության և փրկարար ծառայությունների առկայության ապահովում.

5) գործողությունների իրականացման ընթացքում հաղորդակցման համակարգերի առկայության և գործունեության ապահովում.

6) գործողությունների իրականացման համար նյութատեխնիկական ապահովում.

7) օդի նմուշների ստացման գործընթացի ընթացքում կազմված փաստաթղթերի պատրաստման, պահպանման և փոխանցման կառավարում.

8) չօգտագործված և օգտագործված ֆիլտրերի կառավարման և պահպանման ընթացակարգերի հետևում: Օդի նմուշների ստացումը ներառում է երկու հիմնական միջոցառում անցուղիների ստեղծումը և հոտի հավաքումը:

24. Պետք է գոյություն ունենա սերտ կապ անցուղիների ստեղծման և հոտի հավաքման թիմերի միջև, և նրանց դերերն ու պատասխանատվությունները կարող են համակցվել:

V. ԱՆՑՈՒՂԻՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

25. Նմուշների ստացման գործընթացի հիմնական բաղադրիչը հոտի հավաքման թիմի անվտանգ գործունեությունն է: Այն հնարավոր է ապահովել հոտի հավաքման թիմի համար անվտանգ անցուղիների ստեղծման միջոցով:

26. Անցուղիների ստեղծումը հիմնականում իրականացվում է մեխանիկական եղանակով, սակայն այն կարող է իրականացվել նաև ձեռքով կամ ԱՀՇ-ի օգտագործմամբ:

27. Սույն չափորոշչում ներկայացված է միայն մեխանիկական եղանակով անցուղիների ստեղծումը, քանի որ այն ավելի լայն կիրառություն ունի: Մեխանիկական եղանակով անցուղիներն ստեղծվում են նմուշների ստացումից առաջ ականների ազդեցությունից պաշտպանված տրանսպորտային միջոցների՝ տարածքի միջով՝ սահմանված սխեմայով անցնելու միջոցով:

28. Եթե այդ մեքենաների անիվների նվազագույն ճնշումը հողի վրա գերազանցում է նորմալ քայլվածքի դեպքում առաջացած առավելագույն ճնշումը, ապա համարվում է, որ կարելի է անվտանգ անցնել այդ տրանսպորտային մեքենաների թողած հետքերով:

29. Գործողությունների ընթացքում անցուղիների ստեղծման թիմի ղեկավարը սովորաբար գտնվում է ականների ազդեցությունից պաշտպանված առաջին մեքենայում:

30. Ռադիոյի միջոցով իրականացվում է հաղորդակցում երկրորդ մեքենայի (և ցանկացած այլ մեքենայի), ինչպես նաև ծրագրի կառավարչի և հոտի հավաքման թիմի ղեկավարի հետ: Անցուղիների ստեղծման որոշ գործողություններում որպես ականների փնտրման լրացուցիչ միջոց կարող են օգտագործվել ականների ազդեցությունից պաշտպանված մեքենաներին ամրացված հակասկանային գլանները:

VI. ԱՆՑՈՒՂԻՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԹԻՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

31. Անցուղիների ստեղծման թիմը ներառում է հետևյալ անդամներին՝

1) թիմի ղեկավար: Թիմի ղեկավարը պատասխանատու է անցուղիների ստեղծման միջոցառումների համար՝ դաշտային գործողությունների կառավարչի ղեկավարությամբ և Գործունեության ստանդարտ ընթացակարգերի (ԳՍԸ) համաձայն: Թիմի ղեկավարի հատուկ պարտականությունները ներառում են՝

ա. անցուղիների ստեղծման աշխատանքների մեկնարկից առաջ մեքենաների, լրացուցիչ պարագաների և այլ գործիքների (միջոցների) ստուգումը՝ ապահովելու համար այն, որ նրանք գտնվում են սարքին վիճակում, և գործողությունները կարող են իրականացվել անվտանգ կերպով,

բ. աշխատանքային տեղամասի գնահատում (դաշտային գործողությունների կառավարչի հետ խորհրդակցությունների հիման վրա)՝ որոշելու համար տարածքում ականների ազդեցությունից պաշտպանված տրանսպորտային միջոցների աշխատելու համապատասխանությունը: Սույն գնահատման մեջ անհրաժեշտ է հաշվի առնել հողի մակերևույթը և տրանսպորտային միջոցների (մարդկանց) համար ցանկացած հավանական վտանգները,

գ. անցուղիների ստեղծման աշխատանքներ իրականացնող բոլոր աշխատողների անվտանգության ապահովում,

դ. անցուղիներ ստեղծող մեքենայի ընթացքի ուղղորդում ապահովելու համար անցուղիների միջև անհրաժեշտ հեռավորությունը և ամբողջ տարածքի ներառումը, որտեղից պետք է ստացվեն նմուշները,

ե. մեքենաների անիվների հետքերի հետազոտություն՝ ապահովելու համար դրանց հստակ տեսանելիությունը: Եթե դրանք տեսանելի չեն, կարող է անհրաժեշտ լինել իրականացնել նշագծում,

զ. այն տարածքներում, որտեղից պետք է ստացվեն նմուշները, ապահովել նշագծման պատշաճ իրականացումը, նշագծերի ճշտությունը և համապատասխան GPS ցուցմունքների գրանցումը,

է. ավտոմեքենաների ցանկացած անհրաժեշտ վերանորոգման աշխատանքների կառավարում և համակարգում.

2) նշագծող: Նշագծողը պատասխանատու է այն հատվածների նշագծման և գրանցման համար, որտեղից պետք է իրականացվի նմուշների ստացումը՝ ներառյալ այն հատվածների սահմանումը, որտեղ պետք է փոխվեն ֆիլտրերը: Նշագծողը սովորաբար օգտագործում է չափանիվ՝ ֆիլտրի յուրաքանչյուր փոփոխության միջև ընկած հեռավորությունը չափելու համար: Նշագծողն աշխատում է ականների ազդեցությունից պաշտպանված մեքենաներից անվտանգ հեռավորության վրա և հոտի հավաքման թիմերից առաջ: Ականազերծողներից մեկը կարող է օգտագործվել որպես նշագծող.

3) բուժաշխատող (սանիտար): Բուժաշխատողը պատասխանատու է ՀՊՆՀՀ-ի գործողությունների ամբողջ ընթացքի ժամանակ անհետաձգելի բժշկական օգնություն ապահովելու համար՝ սույն չափորոշիչների կամ ականազերծող կազմակերպության ԳՍԸ-ների

համաձայն: Բուժաշխատողը պատասխանատու է նաև ոչ անհետաձգելի վնասվածքների և հիվանդությունների բուժման համար.

4) վարորդներ (2-3): Վարորդները պատասխանատու են տրամադրված մեքենաները վարելու, վարորդների մակարդակով իրականացվող մեքենաների առօրյա պահպանման և մեքենայի վերանորոգման ու պահպանման գործում մեխանիկին աջակցելու համար.

5) մեխանիկ: Մեխանիկը պատասխանատու է տեխնիկական սպասարկման ժամանակացույցի մշակման, մեքենաների սպասարկման ու վերանորոգման վերահսկման և գործողությունների ընթացքում անհրաժեշտ պահեստամասերով ապահովման համար: Մեխանիկը կարող է լինել վարորդներից մեկը.

6) ականազերծողներ (2-3): Պատահարների, ավտոմեքենաների խափանման կամ այլ անհետաձգելի իրավիճակների դեպքում ականազերծողներն իրականացնում են ձեռքով ականազերծման գործողություններ: Ականազերծողներն ունեն երկակի նշանակության դեր՝ նրանք աջակցություն են տրամադրում անցուղիների ստեղծման և հոտի հավաքման թիմերին:

VII. ԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

32. ՀՊՆՀՀ-ի անցուղիների ստեղծման աշխատանքներում կիրառվող ականների ազդեցությունից պաշտպանված մեքենաները պետք է համապատասխանեն հետևյալ չափորոշիչներին՝

1) մեքենաները պետք է պատրաստված լինեն այնպես, որպեսզի կարողանան դիմակայել հակատանկային ականների պայթյուններին՝ առանց վտանգի ենթարկելու անձնակազմին, կամ ուղևորներին, կամ մեքենային վերանորոգման ոչ ենթակա վնասներ հասցնելու.

2) ավտոմեքենաները պետք է հողի վրա գործադրեն այնպիսի ճնշում, որը գերազանցում է անձի քայլելու և սարքավորումներ տեղափոխելու ընթացքում առաջացած ճնշումը: Ճնշումը պետք է որոշվի գործունեության բոլոր հնարավոր սցենարների դեպքում ականների ազդեցությունից պաշտպանված մեքենաների փորձարկման և գնահատման (ՓնԳ) միջոցով:

3) ոտքից հողի վրա առաջացած ճնշումը տատանվում է 2 կգ/սմ² -ից մինչև մոտավորապես 15 կգ/սմ² կախված անձի քաշից, տեղափոխվող սարքավորումներից, հողի տեսակից, քայլելու արագությունից ու ձևից և կոշիկների վրա ճնշման բաշխումից: Ականների ազդեցությունից պաշտպանված ամենասովորական մեքենայի՝ հողի վրա առաջացրած ճնշումը տատանվում է 10-45 կգ/սմ² կախված հողի մակերեսի հարթությունից, ճնշման բաշխումից, անիվի ճնշումից, բեռից և արագությունից: Մեքենաների և ոտքի առաջացրած ճնշումների բավականին փոքր տարբերությունն անհանգստություն է առաջացնում: Հետևաբար, նմուշներ ստացող աշխատողների՝ հողի վրա առաջացրած կենտրոնացած ճնշումը պետք է բավականին հավասարաչափ բաշխվի՝ ճնշման բաշխումն ապահովելու համար հատուկ ստեղծված կոշիկների տրամադրման միջոցով: Անուր կրունկով ռազմական երկարաճիտ կոշիկները կհանգեցնեն ճնշման մակերեսի նվազմանը, որը նվազեցնում է նման կոշիկների կիրառելիությունը: Խոշոր, տափակ, փափուկ ռետինե տակացուներն ապահովում են ճնշման առավել լավ բաշխում և նվազեցնում են հողի վրա կենտրոնացված ճնշումը:

4) ավտոմեքենայի կողմից ստեղծված յուրաքանչյուր ուղին (անվտանգ անցուղին) պետք է ունենա առնվազն 30 սմ լայնություն և պետք է հստակորեն տեսանելի լինի այն աշխատողներին, ովքեր պետք է ոտքով հետևեն ավտոմեքենաներին:

**VIII. ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԱՆՑՈՒՂԻՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

33. ՀՊՆՀՀ-ի համար մշակված ԳՍԸ-ները պետք է ներառեն մեխանիկական ճանապարհով անցուղիների ստեղծմանը ներկայացվող հետևյալ պահանջները՝

1) անցուղիների ստեղծման ցանկացած մեխանիկական գործողությունից առաջ անցուղիների բացման թիմի ղեկավարի կողմից պետք է իրականացվի աշխատանքային տարածքի գնահատում (դաշտային աշխատանքների ղեկավարի հետ խորհրդակցելու արդյունքում)՝ որոշելու համար տրված տարածքում ականների ազդեցությունից պաշտպանված մեքենաների կիրառելիությունը: Այս գնահատումը պետք է դիտարկի հողի ծածկույթի վիճակը և մեքենաներին (անձնակազմին) սպառնացող ցանկացած հավանական վտանգը.

2) ականների ազդեցությունից պաշտպանված առնվազն երկու մեքենա պետք է առկա լինի օդի նմուշների ստացման մեկ գործողության ընթացքում (անցուղիների ստեղծման և հոտի հավաքման ժամանակ): Առաջին մեքենայի հիմնական գործառույթն այն է, որ այն ապահովի նշագծող և հոտը հավաքող աշխատողների անվտանգ տեղաշարժը: Երկրորդ մեքենայի հիմնական գործառույթն է՝ ապահովել փրկարարական աջակցություն՝ ներառյալ առաջին մեքենայի վերականգնումը: Հետևաբար, երկրորդ մեքենան պետք է հագեցած լինի բուքսիրային կեռչաններով և պարաններով, նիզերով, պահեստամասերով, ականազերծող սարքավորումներով և բժշկական սարքավորումներով.

3) ականների ազդեցությունից պաշտպանված մեքենայի ամբողջ անձնակազմը պետք է միշտ ամրացնի իր ամրագոտիները՝ մեքենայի շարժման ընթացքում: Եթե մեքենայի շարժման ընթացքում անձնակազմի որևէ անդամին անհրաժեշտ է արձակել ամրագոտին, մեքենան պետք է կանգնեցվի նախքան ամրագոտիների արձակումը և մնա անշարժ՝ մինչև անձնակազմի բոլոր անդամների ամրագոտիները կրկին ամրացված կլինեն.

4) ականների ազդեցությունից պաշտպանված մեքենայի ներսում տեղափոխվող բոլոր սարքավորումները պետք է պատշաճ կերպով ամրացված լինեն:

IX. ՀՈՏԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ

34. Հոտը կարող է հավաքվել մեխանիկական եղանակով՝ ֆիլտրերն ամրացնելով ականների ազդեցությունից պաշտպանված մեքենաներին, չնայած ձեռքով իրականացվող հոտի հավաքման գործընթացներն օգտագործվում են առավել լայնորեն:

35. Ձեռքով հոտի հավաքումն առավել լավ վերահսկողություն է ապահովում հավաքման գործընթացի նկատմամբ՝ երաշխավորելով այն, որ նմուշներն ստացվում են հողի մակերևույթից բարձր պահանջվող մակարդակի վրայից, և հողատարածքի ամբողջ մակերեսը ներառված է լինում այդ գործողություններում:

36. Ձեռքով հոտի հավաքման աշխատանքն իրականացվում է՝ օգտագործելով շարժական մոտորացված վակուումային պոմպեր, որոնք ամրացված են երկարացող խողովակին: Ֆիլտրն ամրացվում է խողովակի ծայրին (ֆիլտրի բռնիչին): Ֆիլտրը կանոնավոր կերպով պարբերաբար տեղաշարժվում է հողի մակերևույթի վրայով այնպես, որպեսզի նմուշների ստացման համար նախատեսված ամբողջ տարածքը ծածկված լինի:

X. ՀՈՏԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԹԻՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

37. Ձեռքով հոտի հավաքող թիմը ներառում է հետևյալ անդամներին.

1) թիմի ղեկավար (1): Թիմի ղեկավարը պատասխանատու է հոտի հավաքման գործողությունների կառավարման համար՝ դաշտային գործողությունների կառավարչի ղեկավարությամբ և Գործունեության ստանդարտ ընթացակարգերի (ԳՍԸ) համաձայն: Թիմի ղեկավարը սովորաբար հետևում է հոտը հավաքող աշխատողներին և վերահսկում է նրանց քայլի կայունությունը/արագությունը, գնման սխեման և ֆիլտրերի փոփոխությունները: Թիմի ղեկավարի հատուկ պարտականությունները ներառում են՝

ա. հոտի հավաքման գործողություններն սկսելուց առաջ սարքավորումների և անձնակազմի ստուգումը,

բ. հոտի հավաքման գործողություններ իրականացնող ամբողջ անձնակազմի անվտանգության ապահովումը,

գ. հոտի հավաքման գործողություններ իրականացնող անձնակազմի վերահսկումը՝ ապահովելու համար նմուշների ստացման պատշաճ ընթացակարգերի պահպանումը, որոնք կապված են արագության, զննման սխեմայի, աղտոտումից խուսափելու, գրանցումներ կատարելու և ֆիլտրեր փոխելու հետ,

դ. նշագծող անձնակազմի կողմից նշված վայրերում ֆիլտրերի փոփոխման ապահովումը,

ե. ապահովել, որ հոտի հավաքման անձնակազմը քայլի միայն իրենց համար նախատեսված անցուղիների մեջտեղով, և որ, հաճախ փոփոխվեն վակուումային պոմպերի օպերատորները և ֆիլտրերի հետ աշխատողները,

զ. նմուշների ստացման սարքավորումների ընթացիկ պահպանման աշխատանքների իրականացման ապահովումը,

է. ֆիլտրերի հետ աշխատանքի, նշագծման և ֆիլտրերի պահպանման աշխատանքների պատշաճ իրականացման ապահովումը: Հոտը հավաքող թիմի ղեկավարից պահանջվում է ստուգել յուրաքանչյուր ֆիլտրի պիտակավորումը՝ որպես ներքին ՈԱ-ի ընթացակարգերի մի մաս.

2) պոմպերի օպերատորներ (2): Պոմպերի օպերատորները պատասխանատու են վակուումային պոմպերը գործարկելու համար, որոնք ներքաշում են օդի և փոշու նմուշները: Պոմպերի երկու օպերատորներ քայլում են սկանների ազդեցությունից պաշտպանված մեքենաների կողմից բացված անվտանգ անցուղիներով (մեկ օպերատոր՝ յուրաքան-

յուր անցուղիով) և ֆիլտրերի օգնությամբ համակարգված կերպով հետագոտում են անվտանգ անցուղու երկու կողմերը՝ մինչև որոշակի հեռավորություն.

3) ֆիլտրերի հետ աշխատողներ (2): Ֆիլտրերի հետ աշխատողները պատասխանատու են նմուշների ստացման եղանակների և արագության վերահսկման, ֆիլտրերի բռնիչների ախտահանման, ֆիլտրերը փոխելու և գրանցումներ կատարելու կամ պատշաճ գրանցումները պարբերաբար թիմի ղեկավարին փոխանցելն ապահովելու համար: Ֆիլտրերի հետ աշխատողները սովորաբար քայլում են պոմպերի օպերատորներից 2-3 մ հետո: Բուժաշխատողը, վարորդները, մեխանիկը և ականազերծողներն աջակցություն են ցուցաբերում ինչպես անցուղիների ստեղծման, այնպես էլ՝ հոտը հավաքող թիմերին:

XI. ՀՈՏԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

38. Կենդանին կարող է վարժեցվել հստակորեն հայտնաբերել ֆիլտրի կողմից կլանված թիրախային հոտն այն դեպքում, երբ ֆիլտրն անցկացվում է թիրախային առարկայի մոտով՝ որոշակի հեռավորության վրա: Հայտնաբերման հեռավորությունն այն հեռավորությունն է, որի վրա պետք է անցնի ֆիլտրը թիրախային առարկայի մոտով՝ ապահովելու համար վստահելի կերպով հոտի հայտնաբերումը:

39. Հայտնաբերման վստահելի հեռավորությունը ցույց է տալիս՝

1) այն առավելագույն տարածությունը, որի վրա պետք է անցնի ֆիլտրը նմուշների ստացման համար նախատեսված ամբողջ հողատարածքի մակերեսով՝ հողատարածքը լիովին ծածկելու նպատակով.

2) ֆիլտրի գլխիկի լայնական տեղաշարժման արագությունը.

3) հոտի հավաքման գործընթացի առաջ շարժվելու արագությունը: ՀՊՆՀՀ-ի գործողություններ իրականացնող՝ ականազերծող կազմակերպությունը պետք է իրականացնի ՓևԳ՝ սահմանելու համար իրենց աշխատանքների համար վստահելի հայտնաբերման

հեռավորությունը: ՓևԳ պետք է հաշվի առնեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ակնկալվող թիրախային առարկաները, հայտնաբերող կենդանիների կարողությունները և աշխատանքների հավանական պայմանները: ՓևԳ և հարակից հաշվարկները պետք է փաստաթղթավորվեն և առկա լինեն հետազոտման համար՝ վերահսկման գործընթացի շրջանակներում:

40. Վստահություն ներշնչող հայտնաբերման հեռավորությունը պետք է լինի այն արժեքը, որն օգտագործվում է ներառված տարածքի հաշվարկման, ֆիլտրի գլխիկի լայնական տեղաշարժման արագության և հոտի հավաքման գործընթացի առաջ շարժվելու արագության որոշման համար:

41. Հոտի հավաքման գործընթացների ընթացքում ֆիլտրի գլխիկը պետք է անցնի նմուշների ստացման համար նախատեսված ամբողջ տարածքով վստահություն առաջացնող հայտնաբերման հեռավորության վրա:

42. Նմուշների մեխանիկական ստացման ընթացքում, երբ ֆիլտրերն ամրացված են մեքենայի վրա, ֆիլտրերը կախված են լինում անշարժ վիճակում և ունենում են միայն առաջընթաց շարժում: Հետևաբար, վստահություն ներշնչող հայտնաբերման հեռավորությունը պետք է լինի ամրացված ֆիլտրերի հեռավորության առնվազն կեսը՝ ելնելով այն հանգամանքից, որ մեքենայի վրա ամրացված են մեկից ավելի ֆիլտրեր:

XII. ՀՈՏԻ ՀԱՎԱԲՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

43. Ֆիլտրի գլխիկի լայնական շարժումը և քայլելու արագությունը պետք է գնման ընթացքում վերահսկվեն հոտը հավաքող թիմի ղեկավարի կողմից՝ ապահովելու համար այն, որ ֆիլտրի գլխիկն անցնի գնման ենթակա տարածքի բոլոր մասերից՝ հայտնաբերման վստահելի հեռավորության վրա:

44. Հոտի հավաքման ընթացքում ֆիլտրի գլխիկը պետք է մնա հողին մոտ, սակայն անհրաժեշտ է ապահովել, որ փոշին չխցանի ֆիլտրը: Հողից ֆիլտր 20 սմ հեռավորությունը պետք է համարվի առավելագույն հեռավորություն:

45. Եթե հոտի հավաքումը պետք է իրականացվի խիտ բուսականություն ունեցող տարածքներում, ՀՊՆՀՀ-ի մեթոդներ կիրառող կազմակերպությունը պետք է ունենա նման բուսականության մեջ վստահելի հայտնաբերումներ իրականացնելու փորձ:

46. Խիտ բուսականությունը սահմանվում է որպես այնպիսի բուսականություն, որի միջոցով հնարավոր չէ տեղաշարժել ֆիլտրը՝ ըստ ստանդարտ կորի:

XIII. ՖԻԼՏՐԻ ՓՈԽՈՒՄԸ

47. Թիրախային հոտի մոլեկուլներն օդի հոսանքի միջով կներքաշվեն ֆիլտրի միջով և ի վերջո կկորեն: Մոլեկուլների կորստի պահը կոչվում է «արտանետման կետ»: Արտանետման համար անհրաժեշտ ժամանակը կախված է հոսքի արագությունից և ֆիլտրի նյութից:

48. ՀՊՆՀՀ-ի ֆիլտրերը պետք է փոխարինվեն՝ նախքան արտանետման կետին հասնելը: ՀՊՆՀՀ-ի գործընթացների ՓևԳ պետք է որոշի օդի նմուշների ստացման նպատակով օգտագործվող սարքավորումների համար ֆիլտրերի արտանետման կետը՝ ժամանակի տեսանկյունից: ՓևԳ և հարակից հաշվարկները պետք է փաստաթղթավորվեն և առկա լինեն մոնիթորինգի գործընթացի շրջանակներում իրականացվող ստուգումների համար:

49. Արտանետման կետին հասնելու ժամանակը պետք է լինի մեկ ֆիլտրի օգտագործման առավելագույն ժամանակը և, հետևաբար, կսահմանի օդի նմուշների ստացման միջոցառումների ժամանակ մեկ ֆիլտրի օգնությամբ հետազոտված տարածքի մակերեսը:

50. Ֆիլտրի փոխման ընթացակարգերը պետք է նկարագրվեն ականագերծող կազմակերպության ԳՍԸ-ներում և ներառեն հետևյալ պահանջները՝

1) ժամանակի տեսանկյունից ֆիլտրի առավելագույն կիրառությունը՝ հոտի հավաքման առաջադրանքներ իրականացնելիս.

2) աշխատողների կողմից ֆիլտրին, ֆիլտրի տուփի ներքին մասին կամ ֆիլտրի բռնիչի ներքին մասին դիպչելու սահմանափակումները.

3) յուրաքանչյուր օր առաջին օգտագործումից առաջ և ֆիլտրի յուրաքանչյուր փոփոխությունից հետո ֆիլտրի բռնիչի ախտահանում:

XIV. ՎԱՌԵԼԻՔՈՎ ՎԵՐԱԼԻՑՔԱՎՈՐՈՒՄԸ

51. Նմուշների ստացման մեքենան վառելիքով պետք է վերալիցքավորվի այն տեղամասերում, որտեղից արդեն ստացվել են նմուշներ: Վերալիցքավորման ընթացքում նմուշների ստացման մեքենայի վրա թափված վառելիքը կամ յուղը պետք է լիովին մաքրվի:

XV. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

52. Շրջակա միջավայրի պայմաններն ազդեցություն են ունենում հոտի հավաքման վրա: ՀՊՆՀՀ-ի գործողություններ իրականացնող ականազերծման կազմակերպությունները պետք է ՓևԳ-ի միջոցով սահմանեն շրջակա միջավայրի ընդունելի սահմանները՝ օդի նմուշների ստացման միջոցառումների արդյունավետ իրականացման համար:

53. Այս սահմանները պետք է փաստաթղթավորվեն ԳՍԸ-ներում և պետք է հիմք ծառայեն ՀՊՆՀՀ-ի գործողությունների ՈԱ-ի համար:

XVI. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆՆԹԱՅԸ

54. Նմուշների ստացման գործընթացի ավարտից հետո օգտագործված ֆիլտրերը բերվում են կենտրոնական տեղամաս՝ թիրախային հոտի հայտնաբերման ուղղությամբ վարժեցված հոտոտող կենդանիների կողմից հետազոտման նպատակով:

55. Գոյություն ունեն ՀՊՆՀՀ-ի ֆիլտրերի հետազոտման չորս հնարավոր արդյունքներ՝

- 1) ֆիլտրն ամբողջովին դրական է և վերադարձվում է որպես դրական (հայտնաբերում).
- 2) ֆիլտրն ամբողջովին դրական է և վերադարձվում է որպես բացասական (բացթողում).
- 3) ֆիլտրն ամբողջովին բացասական է և վերադարձվում է որպես բացասական (ճիշտ մերժում).
- 4) ֆիլտրն ամբողջովին բացասական է և վերադարձվում է որպես դրական (ԿՏ):
 ՀՊՆՀՀ-ի վերլուծության նպատակն է առավելագույնի հասցնել հայտնաբերումները և նվազագույնի հասցնել ԿՏ-ները: Ստանդարտացված վերլուծության համակարգը պետք է մշակվի ՀՊՆՀՀ-ն օգտագործող կազմակերպության կողմից և պետք է ներկայացված լինի կազմակերպության ԳՍԸ-ներում:

XVII. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՄԱՍԸ

56. Վերլուծությունը սովորաբար իրականացվում է հատուկ այդ նպատակի համար նախատեսված շինությունում: Շինությունը պետք է պահպանվի լաբորատոր ստանդարտներին համապատասխան մաքրությամբ և ապահովի անհրաժեշտ ջերմություն:

57. Վերլուծության տեղամասը պետք է՝

- 1) տեղակայված չլինի այնպիսի տարածքում, որ կարող է ենթարկվել նավթամթերքի, պարարտանյութերի, քիմիական նյութերի և աղբի հոտերի ազդեցությանը.
- 2) տեղակայված չլինի պայթուցիկ նյութերի/զինամթերքների պահեստների, ականապատ դաշտերի կամ այն տարածքների կողքին, որտեղ իրականացվում են պայթեցման աշխատանքներ.
- 3) ենթարկված չլինի մթնոլորտի աղտոտմանը՝ երթևեկության, գործարանների արտանետած գազերով կամ տեղական այրումների ծխերով.
- 4) պետք է լինի մեկուսացված կամ պաշտպանված պոտենցիալ խանգարող ձայներից:

**XVIII. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՖԻԼՏՐԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ**

58. Հոտոտող կենդանին վարժեցվում է մեկ կամ մի քանի թիրախային հոտեր ճանաչելու և ֆիլտրի մեջ հավաքված բոլոր այլ հնարավոր հոտերն անտեսելու ուղղությամբ: Սակայն արտառոց հոտերի հետևանքով սխալ ցուցումներից խուսափելու նպատակով վերլուծության իրականացման հաստատությունում հոտերի առկայությունը պետք է հասցվի նվազագույնի:

59. Պետք է կիրառվեն հետևյալ ընթացակարգերը՝

1) հենարանները և այլ լրացուցիչ պարագաները, որոնց հետ կարող է առնչվել կենդանին, հետազոտման ընթացքում պետք է ախտահանվեն նախքան օգտագործումը և պարբերաբար օգտագործման ընթացքում.

2) ֆիլտրերը պետք է մնան իրենց տուփերում փակ՝ մինչև հետազոտման սարքերի վրա տեղադրվելը.

3) ֆիլտրերին չպետք է դիպչեն կամ շփման մեջ մտնեն այն ամենի հետ, ինչը կարող է աղտոտում առաջացնել.

4) միայն հատուկ մշակված գործիքներ, որոնք պարբերաբար ախտահանվում են (առնվազն՝ յուրաքանչյուր օր) պետք է օգտագործվեն վերլուծական սարքավորումների հետ աշխատանքի համար: Վերլուծության սարքի կառուցվածքը և ինքը՝ վերլուծությունը պետք է բացառեն հետազոտման ընթացքում ֆիլտրերի միջև խաչաձև աղտոտման հնարավորությունը:

**XIX. ԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿԱՍԿԱԾԱՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՖԻԼՏՐԵՐԻ
ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

60. Երբ կենդանիների նվազագույն թիվն օգտագործվում է գործառնական ֆիլտրերի հետազոտման համար, ֆիլտրը պետք է վերադարձվի որպես դրական՝ մեկ հոտոտող կենդանու կողմից նշված լինելու դեպքում:

61. Սակայն եթե հետազոտության համար օգտագործվում են նվազագույնից ավելի մեծ քանակությամբ հոտոտող կենդանիներ, նպատակահարմար կլինի սահմանել մի չափորոշիչ, ըստ որի ֆիլտրը պետք է վերադարձվի որպես դրական՝ մեկից ավելի հոտոտող կենդանիների կողմից նշված լինելու դեպքում:

62. Այն պայմանները, որոնց ներքո պետք է ճշգրտվի այդ չափորոշիչը, կսահմանվեն ԱԳԱՄ-ի հետ խորհրդակցելու արդյունքում:

XX. ՀԵՏԱԳԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

63. Դրական կասկածանքով վերադարձված ֆիլտրին ամրագրված հողակտորը պետք է ենթարկվի հետագա հետազոտությունների:

64. Երբ դրական հողակտորը սահմանակցում է բացասական հողակտորի հետ, դրական հողակտորի հետագա հետազոտությունը պետք է առնվազն 10 մ ներթափանցի բացասական հողատարածքի մեջ:

65. Բացասական կասկածանքով վերադարձված ֆիլտրին ամրագրված հողակտորը կարող է բացառվել՝ հաշվի առնելով այլ առկա տեղեկատվությունը, ներառյալ հետազոտության մասին տեղեկատվությունը և պայթուցիկ նյութերի հայտնաբերման այլ համակարգերի օգտագործման արդյունքները:

XXI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՖԻԼՏՐԵՐԻ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

66. Հետազոտված ֆիլտրերը պետք է կնքվեն և տեղակայվեն մաքուր տարածքում առնվազն վեց ամսվա ընթացքում կամ ԱԳԱՄ-ի կողմից նշված այլ կարգով:

XXII. ՀՈՏՈՏՈՂ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ

67. Յուրաքանչյուր հոտոտող կենդանու վստահելիությունը և ճշտությունը պետք է սահմանվեն պարբերական փորձարկումների միջոցով, որոնց ընթացակարգերը և հաճախականությունը ներկայացված են ականազերծող կազմակերպության ԳՍԸ-ներում:

68. «Վստահելիությունը» չափում է ժամանակի ընթացքում գործունեության հետևողականությունը:

69. «Ճշտությունը» չափում է ժամանակի որոշակի պահին դրական և բացասական կասկածանքներով ֆիլտրերի ճշգրիտ տարբերակումը:

70. Փորձարկման արդյունքները պետք է օգտագործվեն սահմանելու համար, թե որ հոտոտող կենդանիները պետք է օգտագործվեն ֆիլտրերի հետազոտման համար, ինչպես նաև՝ օգտագործման ենթակա՝ հոտոտող կենդանիների նվազագույն թիվը:

XXIII. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԸՆԹ-ԱՑԱԿԱՐԳԵՐԸ

71. Հոտոտող կենդանիներին փորձարկելու ժամանակ՝

1) փորձարկումը պետք է իրականացվի կանոնավոր ինտերվալներով՝ ինչպես փաստաթղթավորված է ականազերծող կազմակերպության ԳՍԸ-ներում.

2) փորձարկման փաստաթղթերը պետք է պահպանվեն հետազոտման տեղամասում անհրաժեշտության դեպքում ՈԱ-ի արտաքին թիմերի կողմից ուսումնասիրվելու համար.

3) որպես դրական հայտնի առնվազն 10 ֆիլտրեր պետք է օգտագործվեն փորձարկման ժամանակ, իսկ փորձարկման ընթացքում օգտագործվող դրական ֆիլտրերի տոկոսն օգտագործվող ֆիլտրերի ընդհանուր թվի մեջ պետք է կազմի 5 - 20 տոկոս:

4) փորձարկման ֆիլտրերի հետազոտման ընթացքում ներկաներից ոչ ոք չպետք է իմանա, թե որ ֆիլտրերն են դրական, և որոնք՝ բացասական (ներառյալ փորձարկման գործակալը, եթե այդպիսին առկա է).

5) փորձարկման ֆիլտրերը պետք է տեղակայված լինեն այն վայրերում, որոնք միանման են փորձարկման նմուշների ստացման միջավայրերին.

6) հոտը հավաքող թիմը պետք է կիրառի նմուշների ստացման նույն ընթացակարգերը, որոնք գործառնական նմուշների ստացման ընթացքում կկիրառվեն ՀՊՆՀՀ-ի մեթոդներ օգտագործող կազմակերպության կողմից փորձարկման ֆիլտրերը նախապատրաստելու ժամանակ.

7) փորձարկման որոշ դրական ֆիլտրեր պետք է տեղակայված լինեն այնպիսի թիրախների մոտ, որոնք նախկինում ՀՊՆՀՀ-ի մեթոդներ օգտագործող կազմակերպության կողմից չեն կիրառվել վարժեցման համար:

XXIV. ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ. ԱՌԱՆՁԻՆ ԿԵՆԴՐԱՆՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

72. Հայտնի դրական և բացասական ֆիլտրերի կիրառմամբ փորձարկման ընթացքում, ընդունելի են գործառնական հետազոտությունների ժամանակ հանդիպող հետևյալ իրավիճակները՝

1) յուրաքանչյուր հոտոտող կենդանի պետք է հասնի հայտնաբերման առավելագույն 70 տոկոս մակարդակի.

2) յուրաքանչյուր հոտոտող կենդանի պետք է հասնի ԿՏ-ի առավելագույնս 5 տոկոս մակարդակի:

73. Այնպիսի փորձարկման ընթացքում, որի դեպքում օգտագործվում են միայն 10.2.1 կետի չափանիշները բավարարող՝ հոտոտող կենդանիներ, համակարգն ամբողջությամբ (ընդհանուր առմամբ ըստ կենդանիների թվի)

1) պետք է ապահովի 100 տոկոս հայտնաբերման մակարդակ և գործնականում ապահովում է 90 տոկոս և ավելի բարձր հայտնաբերման մակարդակ.

2) պետք է ապահովի ԿՏ-ի մակարդակի 20 տոկոսից ցածր ցուցանիշ:

74. Համակարգը պետք է օգտագործի առնվազն երեք հոտոտող կենդանի: Սույն չափորոշիչները բավարարելու նպատակով կարող են անհրաժեշտ լինել ավելի մեծ թվով հոտոտող կենդանիներ:

XXV. ՆՅՈՒԹ-ԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

75. Ֆիլտրերը պետք է պահպանվեն և տեղափոխվեն (ներառյալ ամօրյա դաշտային աշխատանքների համար) այնպես, որպեսզի պաշտպանված լինեն անցանկալի աղտոտումից:

76. Ֆիլտրերը պետք է տեղադրվեն մաքուր և չոր միջավայրում և պաշտպանվեն բարձր ջերմաստիճաններից և արևի ուղղակի ճառագայթներից:

77. Չօգտագործված և օգտագործված ֆիլտրերը երբեք չպետք է տեղադրվեն միևնույն վրանում, սենյակում կամ միմյանց մոտ: Ֆիլտրերը երբեք չպետք է տեղափոխվեն կամ պահպանվեն`

- 1) զենքերի և զինամթերքի հետ.
- 2) պայթուցիկ նյութերի և պայթուցիչների հետ.
- 3) նավթամթերքի և զենքերի հետ.
- 4) չպետք է տեղափոխվեն այն աշխատողների հետ մեկտեղ, ովքեր շփում են ունեցել նշված բոլոր առարկաների հետ և պատշաճ կերպով չեն մաքրվել (օրինակ՝ ՊԶՎ-ի աշխատողներ):

XXVI. ՀՈՏԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

78. Նմուշների ստացման` օգտագործվող սարքավորումները պետք է ապահովեն օդի ներքաշման կայուն մակարդակ:

79. Ներքաշումը պետք է պարբերաբար ստուգվի նմուշների ստացման ընթացքում ապահովելու համար հոսքի կայուն մակարդակը: Երկու գլխիկներով նմուշների ստացման խողովակները չպետք է օգտագործվեն գործառնական ֆիլտրերի նախապատրաստման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ